

786/062)



8209

13



ՍԿԱՌԻՏԸ

THE SCOUT



ԲԱՑԱՌԻԿ ԿԱՄՍՈՐԵԱՑ
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ Ի
ԵՐՈՒՍԱԴԵՄ 1938

Ս Կ Ա Ո Ւ Տ Ը

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒԻՒՆ Հ. Մ. Ը. Մ. Ի ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՄԱՍՆԱՃԻՂԻՆ

ԳԻՆ՝	Այս բացառիկը պատրաստեցին՝	ՀԱՍՅԷ՝
Պաղեստին 30 ՄԻ	ՀՐԱՅՐ ԵՐԿԱԹԵԱՆ	“HOMENETMEN”
Սիրիա-Լիբան. 20 Ս.Դ.	ԼԵՒՈՆ ՔԵՇԻՇԵԱՆ	JERUSALEM BRANCH
Մնացեալ երկիրներ 4 ԳԻ.	ՄԵՍՐՈՊ ԵՐԿԱԹԵԱՆ	c/o Levon H. Keshishian
		P.O.B. 246, Jerusalem

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՒԻՒՆ

“Կրթարան” Ը — Մ. ԵՐԿԱԹ	1
Հայ Արի — Հ. ԵՐԿԱԹ	3
Մեր Մասիսի Աղանիները — ՎԱՀՐԱՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ	4
Սկաուտութիւնը և Մենք — Ն. Օ. ԽԱՆՃԵԱՆ	7
... Եւ Երառայել Հայրենիքիս — Գ. ՓՈՏՏԱՅԵԱՆ	10
Սկաուտական կազմակերպութիւն և Յառաջադրութիւնները — ՎԱՋԳԷՆ ԱՆԻՐԷԱՍԵԱՆ	12
Տեղ մը՝ Հայ Սկաուտ մը — ՍԵՊ	14
Քայլերգ՝ Սկաուտական Բանակումի, Հ.Մ.Ը.Մ.Ի: Հայ Արիներ (Երգ)	16
Հ.Մ.Ը.Մ. Ի Գաղափարականը — ՀՈՎԻԿ ՆԱՅԻՐԵԱՆ	18
Պէյտըն-Փառքը — Լ.	19
Մարզանքին Գերը անհատին առողջութեան և Ազգապահպանման գործին մէջ — ՕՆՆԻԿ ՓԻՒԽԵԱՆ	20
Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր — Լ.	23
Ճամբարը — Ն. Օ. Խ.	24
Սկաուտը — ԵՆՐԱՅԱՆ ՊԱՂԵՐԱ	29
Գրիգոր Յակոբեան, Վահան Չերազ, Եզնիկ Քաջունի, Օննիկ Եագմաճեան, Եղիշէ Քաջունի, Հայ Արիներու Միութիւն — Հաւաքեց Լ.	31
Ազնարկ մը Հայ Սկաուտական Պատմութեան	35
Մասնաճիւղեր՝ Ֆրանսա, Երուսաղէմ, Պէյրութ, Հալէպ, Գամասկոս, Լաթաքիա, Գահիրէ, Աղեքսանդրիա, Յունաստան, Պուլկարիա	36

ՄԵՐ ԽՕՍԸ

Մեր ջերմագին շնորհակալութիւնները կը յայտնենք բոլոր անոնց որոնք իրենց աջակցութիւնը բերին “ՍԿԱՈՒՏԸ”-ին հրատարակութեան, ինչպէս նաեւ այն բոլոր մասնաճիւղերուն որոնք ընդառաջելով մեր խնդրանքին, փութացին ուղարկել մեզ իրենց տեղեկագիրները: Շնորհակալութիւններ նաեւ “ՌԱԶՄԻԿ” Թերթին եւ “ՀԱՅ ՔՆԱՐ”-ի խմբագրութեանց:

Բացառիկը աւելի ընդարձակ ծաւալով հրատարակելու տենչանքէն մղուած, պարտաւորութեանը ակամայ յետագիկ հրատարակման թուականը:

Ի ՄԱՍՆԱՃԻՂԻՆ

Ս Կ Ա Ո Ւ Տ Ը

THE SCOUT

965
2013

Բ Ա Յ Ա Ռ Ի Կ
Թ Ի Ի 1
1938



Հ. Մ. Ը. Մ.
“ԱՄՍՕՐԵԱՅ
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ” Ի

Ս Կ Ա Ո Ւ Տ

“Կ Ր Թ Ա Ր Ա Ն” Ը

Չինք ըսեր Ուսումնարան, կ'ըսենք կրթարան

Ուսում և կրթութիւն այլ բաներ են, որչափ որ իրենց մասնայատուկ տեղը ունին նր. կարագրի կերտումին մէջ: Կրթութիւնը արտայայտիչն է հոգեկան բոլոր ազնիւ արժէքներու. ազնուութիւնը, անկեղծութիւնը և այլն յատկանիշերն են անոր: Իսկ ուսումը առանց կրթութեան կ'արտայայտէ իբր նկարագիր, անախառութիւն, թեթեւամտութիւն, նենգամբտութիւն և այլ յուր յատկութիւններ: Ոչ կրթեալ ուսումնականը յաճախ փորձանք է ընկերութեան մէջ, բայց ուսումով տկար նոյնիսկ անուսկրթեալը օրհնութիւն մ'ը:

Ուսումը և կրթութիւնը լըծորդներ են դէպի յառաջդիմութիւն դէպի իտէպական և հոգեկան բարձրութիւններ: Ներկայ սերունդը՝ առհասարակ, չափով մը ուսումի տէր է, սակայն կիրթ, տիտան նր. կարագիրներ պէտք են մեզի վատասերումի թունալեց խորշակներուն դէմ՝ կուրծք տալու, ի խնդիր մեր ցեղային առաքինութիւններու պահպանումին:

Այստեսակետով մեծ է դերը Հայ Սկաուտական շարժումին: Ամենայն իրաւամբ պիտի կօչենք զայն կրթարան. կրթարանը նկարագրի, բարոյականութեան և կրթարանը ապագայ Հայ մարդո: Տեսակ մը կեան-

12817

258-86 14339-04

քի դպրոց է ան ուր խօսքը կը
դառնայ գործ, չոր անտառի մե-
նեքը կը գործնականացուն:

Բնութեան ծոցին մէջ սկա-
ռաւ մտերիմը քարին, հողին,
ջուրին, ծառին և օդին, միշտ
հալորդակից անոր անծանօթ
խորհուրդին ու ենթակայ իր
վարիչին հսկողութեանը և
գուրգուրանքին, այսպէս տա-
րիներ Գալլիկի աստիճանէն
մինչև Արարատեան Սկառու ի
աստիճանը կը կրթութի, կը մար-
դուի: Սկառուական կրթարու-
նիկայդ՝ մէնմիաստիճանը հան-
գըրուաններ են մինչև հասու-
նութեան շրջանը, իբր փայար
մարդ:

Մեր բազում կարիքներու
մէջ, ազգային իւրաքանչիւր
ձեւնարկ միշտ նկատի ունի
ազգապահպանումը:

Փոքր ենք քանակով, իսկ ոչ
աննշան որակով: Լայն են Հա-
յաշխարհի հորիզոնները որոնց
պաշտպանութեան համար դի-
մացկուն ամբողջութիւններ ան-
հրաժեշտ են: Անոնցմէ մին
է Հայ Սկառուական շարժումը:

Քանի՛ այնքան կարեւոր դեր
մը կը վերապահենք անոր,
պայման է զայն դնել հաս-
տատ հիմերու վրայ, առաւե-
րագոյն չափով օգուտ քաղե-
լու անոր առաքելութենէն:

Հարցում մը բոլորին, թէ
կարելի չէ՞ միթէ համախմբել

բոլոր սկառուական անջատ
գործունէութիւնները, մէկ ծը-
րագրի, մէկ ուղղութեան մը
շուրջ, երբ բոլորը արդէն կը
հետապնդեն նոյն նպատակը:

Մենք այդ կը դանենք կա-
րելի և անժխտելի պահանջ մը
սկառուական ոգիին տարածման
և իւրացումին համար: Ար-
դէ՞ք ատենը չէ ամէն ժամա-
նակէ աւել լրջօրէն զբաղուե-
լու ու աշխատելու այս ուղ-
ղութեամբ: Չենք ուզեր ատ-
կից յառաջ գալիք օգտակա-
րութիւններու վրայ ծանրա-
նալ, անոնք շատ յստակ են և
ըմբռնելի, էականը և անյետա-
ձգելին՝ կառուցանելն է՝ այդ
ստրուքիները:

Այս բացատրիկ առիթով, իբր
Հ. Մ. Ր. Մ. ի մասնաճիւղ մը, այս
առաջարկը կը ներկայացնենք
բոլոր, քոյր մասնաճիւղերուն,
մասնաւորապէս՝ Սիւրիոյ - Լի-
բանանի եւ Պաղեստինի շրջ-
վարչութեան, նաև "Հայ Արի-
ներու միութեան"ը: Ծատ փա-
փաքել է որ այս մասին ըլլան
հրապարակային արտայայտու-
թիւններ մամուլի էջերէն:
Եթէ աշխատանք չունայուի,
վտահ ենք անոր յաջողու-
թեան, այն ատեն է որ Հայ
Սկառուական շարժումը իրա-
պէս պիտի դառնայ նոր սերուն-
դին անադիւտ կրթարանը:



Մ. ԵՐԿԱԹ

1059-54

Հայ Արի՛,

Արմէն ցեղի, փշոտ ու դերբուշ կեանքի անուպարմի խօշակ
ընթացքին մէջ, դո՛ւ ծաղկեցար որպէս ծաղիկ մը բուռնումնաշտ,
սևոր դարաշար վերքերուն սպերակի: Հասակ աւիր, մեծացար, և
քո՛ւ ցեղիդ վայել նպարտաբեամբ անարգեցիր ամէն խոչընդոտ՝
հասկերո՛ւ քո՛ւ վե՛ն կարստակի "Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր":

Ես կը տեսնեմ հասակի ցցուն ու կայստ, յերակ կատարի, և
ցոպո՛ւ ու դրօշո՛ւ անշիկ կը դիտես հեռուն, հեռուն, և գոցցես ա-
նկացած՝ մի ինչ որ բան կ'որոնես այդ աննշանաբեամ մէջ սեղեղո՛ւ:
Արդ՞ օր քո՛ւ ցեղիդ բախառակակ ոգի՛ն... Հայ Արի՛, ու՛շ դի՛ր ցե-
ղիդ անցիկ, որ կ'ոգեկոչէ քեզ նայրեկի յեռերո՛ւ ընդերքե՛ն՝ այն-
տեղ ուր կ'ապրին ցեղիդ կախիքներո՛ւ սրբազան ոգիները:

Այո՛, կը հաշտամ քո՛ւ խեղճիկ, հոգնով արի, մարմնով
առողջ, մարմով մարտը... Գո՛ւ անխռով քաղի՛ միշտ յառաջ, բո՛ղ
մեանակէ քո՛ւ հոգի կարստ և բո՛ղ չտկարուե՛լ քո՛ւ բազուկը արի,
որ սգեկը ցեղիդ սգեկը արիւնովն է առցուն, շարսխռամ սրբազան
նարտը՛ր քո՛ւ նայրեկի աշխարհիկ:

Գո՛ւ կարգապահ Արիակակ շարքերուն, նայ զինուորն և կը
խօսի, բանգի պիտի գայ մի օր, որ դո՛ւ մեկդի պիտի դես քո՛ւ
ցոպն ու դրօշը Արիակակ, և ի փոխան պիտի գրկես նպարտօրե՛ն,
գործիքը վրեժի և դրօշը Հայուն Եռագոյն, և պիտի դիմես անայրայ
դեպի Մասիակ սրեւո՛ր կորոդերո՛ւ ցեղիդ խորհրդակելը այդ սիգա-
պակն բարձունքի՛ն՝ Հայուն դարաշար Պանակիկ:

Ե՛լ, ոտքի կանգնի՛ր, Հայ Արի՛, և քո՛ւ ցոպիդ յեռած շրջի՛ր
երկրէ երկիր, աշխարհ աշխարհ և երմունձէ՛ քո՛ւ խեղճիկ շունչը
վսե՛մ նայո՛ւ մայորս՛ը սրակերո՛ւ մէջ, որպէսզի դադարի անձիտունը
քո՛ւ աղբրակ տառապած ցեղիդ:

Թող յաշտ ապրի քո՛ւ խեղճը, և բիբիցս կեցցե՛ քեզի
ձեռնկո՛ւ առողջ Հայ ցեղը Արմէնակակ:

Հ. ԵՐԿԱԹ

Երուսաղէմ

ՄԵՐ ՄԱՍԻՍԻ ԱՂԱՒԻՆԻԵՐԸ

Ընդհանուր Պատերազմի սկզբնաւորութեան, Գերման Նաւատորմի զորաց ծովը ելած, կը պատրաստուէր յարձակիլ անգլիական նաւահանգիստներուն վրայ:



ՎԱՀՐԱՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Գերման զրահաւորներէն մէկուն մէջ հայրենասէր անգլիացի լրտես նա-

ւազ մը կար որ իր հայրենիքին սպառնացող վտանգը լսելուն, իր հետ պահած աղանիւի մը վիզէն կախուած նամակով մը անգլիական կառավարութեան տեղեկացուց թշնամիին ծրագիրը:

Թղթատար աղանիւն անգլիական պատերազմական նախարարութեան պաշտօնատեղին յանձնեց սոյն երկտողը: Այսպէս, այդ աւերիչ յարձակումը ձախողեցաւ, թէև լրտես հայրենասէրը իր պատիժը գտաւ:

Մեր արծարծած հարցը սակայն այս չէ՝ աղանիւն ի՞նչպէս նամակը տարաւ ճիշտ պահան-

ջուած հասցէին, Այս գիտնալը կարեւոր է:

Ամէն Աղանի մեր զաւակներուն նման բոյն մը, պաշտպան մը ունի եւ անոնցմէ երբե՛ հեռանալ չուզէր: Եթէ բռնի հեռացնէք ժամանակաւոր կերպով, անմիջապէս որ իր թռելու ազատութիւ-

նը վերագտնէ, կը վերադառնայ ուղղակի իր տաքուկ բոյնը:

Հետեւաբար, Ս. Էջմիածնայ տաճարին մէջ ապրող աղանի մը եթէ Երուսաղէմ փոխադրենք, վզէն երկտող մը կախենք ու զինքը կրկին օդին մէջ ազատ թողունք, այդ հայրենի թռչնիկը ուղղակի Հայաստանի կարօտաւից ճամբան պիտի բռնէ, քանի մը օրէն Էջմիածնայ տաճարը պիտի հասնի, նամակը իր վզին:

Աշխարհիս թղթատար աղանիները այսպէս է որ լիուլի կը կատարեն իրենց վստահուած պաշտօնը:

Հոս կարեւոր հարց մը կը ծագի գիտնալու թէ՛ անոնք ի՞նչպէս կը գտնեն իրենց ճամբան, առանց կողմնացոյցի, առանց իմացական բարձր կարողութեան:

Կարգ մը գիտուններ կը կարծէին որ այս աղանիները սուր յիշողութիւնով մը օժտուած ըլլալով, իրենց անցած լեռները, ձորերը, գետերը, ծովերը, քաղաքները վերյիշելով նոյն ճամբէն իրենց բոյները կը վերադառնային:

Այս ենթադրութիւնը, սակայն, սխալ էր: Ուրիշ գիտուններ Չինաստանէն Գերմանիա փոխադրեցին, բոլորովին գոց վանդակներու մէջ նաև նուազած վիճակով, եւ երբ Գերմանիայէն ազատ թողուցին այդ աղանիները, անոնք կրկին վերադարձան Չինաստանի իրենց բոյները:

Գիտական աշխարհը, գրեթէ միաձայնութեամբ, այսօր ընդունած է որ աղանիին բոյնն է պաշտպանը, այսինքն՝ հայրենիքը և ճնողը մաքնիսական քաղաքական զօրաւոր ոյժ ունին և այդ հրաշակերտ ոյժին ազդեցութեամբ աղանիին կը վերադառնայ իր բոյնը, ինչպէս մետաղի կտոր մը կը կպչի մաքնիսի մը, այդ կտորը որ կողմը որ հեռացնենք:

Ազատ օդին մէջ, իր հայրենի ճանապարհին վրայ, տաքուկ բոյնի սիրով բոցավառ աղանիին՝ գիշակեր թշնամիներով յաճախ շըրջապատուած կ'ըլլայ եւ կը պատահի որ անոնց զոհ կը դառնայ իր վտիտ վիզէն կախուած պատգամը հայրենիք չտարած:

Թոյնի և պաշտպանի, հայրենիքի և ծնողքի քաղաքական ոյժը աւա՛ղ որ չէ կարող կանխել այս տխուր փորձանքները:

* * *

Մեր հոգեհատորները, մեր անուշիկ զաւակները, Հայաստանի վաղուան անսաւան սիւները, Մասիսի սպիտակ մէյմէկ աղանիներ են, հայրենի շունչով, կարօտով, սիրով ծնած ու սնած:

Դարերու վանտալական հալածանքները, հարուածները չեն կարողացած և չեն կարող տկարացրնել, արգիլել մեր բոլորին հոգիներուն թռիչքը դէպի մեր բոյնը, մեր պաշտելի հայրենիքը:

Ամէն հայորդի, ուխտերու, աւետիսներու, յոյսերու շողջողուն պատգամներ վիզէն կախուած՝ մաքնիսական, Նախախնամական ոյժով մը կապուած է իր տան, իր մեծ Տան՝ իր սիրասուն Հայրենիքին:

Հ. Մ. Բ. Մ. Ը այս Մասեաց Աղաւնիները իբր սկառուտ իր շարքերէն ներս առնելով, անոնց հայրենասիրութիւն չէ որ կ'ուզէ սորվեցնել: Զանի որ այդ զգացումը բոլորիս մէջ բնածին է:

Մենք մեր փոքրիկները կը պատրաստենք արժեցնելու, սուղ ծախելու երիտասարդ հոգին, հայրենասէր շունչը, զիրենք հեռու պահելով գիշատիչներէ, որոնք իրենց պարտականութիւններուն կատարումի ճանապարհին ճակատագրական արգելքներ են:

Սկառուտական դաստիարակութեան հիմն է ծանօթացնել անչափահասին կեանքի բոլոր փորձանքները և անոնցմէ գերծ մրնալու միջոցները: Բանակումներ, արշաւներ, զանազան խաղեր, փորձառական շրջանի մը դերը կը կատարեն:

Երբ երանելի օր մը, հայրենի ուրապոտոյտ, անմատչելի ճանապարհներուն քարտէսը իրենց սրբտերուն վրայ փորագրուած, այս հայորդիները ճամբայ ելլեն, շուտով պիտի հասնին իրենց բոյները, իրենց Հայրենիքը, առ'ղջ միտքով, առ'ղջ հոգիով, աղաւնիի կոյս արիւնով: Մեր ազատագրութեան օրերուն, 150 սկառուտներ իրենց պարտականութիւնը հերոսաբար կատարեցին:

Ճշմարիտ սկառուտ մը երբ երգում կը կատարէ "Մառայելու իր Հայրենիքին, իր Աստուծոյն", պատրաստ ըլլալու է չախչախե-

լու այն բոլոր արգելքները, թըշնամիները, որոնք իր ուխտին կատարման արգելք հանդիսանալ պիտի ուզեն, մանաւանդ որ հայորդի է և կ'սպրի անշնչելի, ճնշիչ մշուշի մը մէջ:

Սկառուտ վարիչներու պարտականութիւնն է, ուրեմն, ոչ թէ խանդավառուիլ մեր փոքրիկներուն բնածին հայրենասիրական ելոյթներէն, այլ՝ լիմաստնօրէն ջանալ, պատրաստել մեր փոքրիկները, հոգածու գտնուելով որ անոնց հուժկու հայու թեւերը, մոլոր թիւններ և ուժացումներ չխորտակեն:

Թեւ չունեցող որեւէ հայրենասէր աղաւնի հայրենի պատգամը չէ կարող փոխադրել:

Հ. Մ. Բ. Մ. Ը մեր Մասեաց Աղաւնիներու թեւերը հաստատ պահելու, զանոնք գորացնելու սահմանուած է: Մեր կտրելիք հեռաւորութիւնները անսահման են: Ճղճիմ ոյժերով այսքան նուիրական նպատակի մը հասնիլ յուսալը՝ յիմարական պիտի ըլլար:

Հ. Մ. Բ. Մ. Ը մեր Մասեաց Աղաւնիներուն կը սորվեցնէ արհամարհել աշխարհի մեր բոլոր թշնամիները, գիտակից զանոնք չախչախելու, ամլութեան գատապարտելու բոլոր միջոցներուն, նախապատրաստուած, երկաթեայ բազուկով, ոսկի սրտով, յաւիտենական ուխտով...:

Պէյրութ



ԵՐՈՒՍԱԴԼԵՍԻ Հ.Մ.Բ.Մ.Ի ՍԿԱՌԻՏԵՐԸ ԱՐՇԱԽՆԵՒ ՍԸ ԱՐԹԻ



ԵՐՈՒՍԱԴԼԵՍԻ Հ.Մ.Բ.Մ.Ի ԽԱՂԱՎԱՅՐԸ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՒՍԲԸ

ՍԿԱՌԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՆՔ

Սկառտութիւնը մեր մէջ
այնքան քիչ "հասկցուած" է,
կամ այնքան սխալ "ճանչ-
ցուած", որ անհրաժեշտ է օգ-
տուիլ ամէն առիթէ, առանց
կրկնութեան վախի, խօսելու,
միշտ խօսելու համար իր մա-
սին:

Մեր մէջ՝ սկառտութիւնը
յաճախ նկատուած է մարմնա-
կըրթանքի ձև մը, ինչպէս՝
ֆուլթայլը, թեքիսը, պասքէթ-
պոլը, ևլն.։ Երբեմն ալ ան
նմանցուած է զինուորական
նախակրթարանի մը:

Ան ո՛չ մին է սակայն, ո՛չ
ալ միւսը իր էութեան մէջ:

Սկառտութեան իրական
ձգտումն է՝ ապագայի ազնիւ
ու գործունեայ քաղաքացիներ
պատրաստել հայրենիքին, ա-
նոր յառաջդիմութեան ու ա-
պահովութեան պարտականու-
թիւնը զգացոլ:

"Սկառտ" բառը անգլիա-
կան բանակին մէջ կը նշանա-
կէ յառաջապահ, լրտես զին-
ուոր, որուն պարտականութիւնն
է, երբեմն իր կեանքի գնով

իսկ հետադատելու թշնամիի
դիրքերը, ու անվտանգ առաջ-
նորդելու իր բանակը դէպի
ապահով յալթանակ:

"Սկառտ"ը այսօր սակայն՝
դարձած է միջազգային բառ,
քիչ մը տարբեր իմաստով,
"Սկառտ"ը այսօր հոմանիչ է
ասպետական վեհանձնութեան
հերոսական նուիրումի ու յան-
դըգնութեան տէր, ուղղամիտ
ձեռներէյ, անշահախնդիր հայ-
րենասէրի:

Սկառտը արհեստով մարզիկ
չէ՛, սկառտը նպատակով զին-
ուոր չէ. բայց չ'արհամարհե-
ր ան մարմնական առողջութեան
անհրաժեշտութիւնը (ընդհա-
կառակը) ոչ ալ ինքնապաշտ-
պանութեան արդար իրաւուն-
քը (աւելի ճիշդ թերեւս՝
պարտականութիւնը):

"ժողովուրդ մը", կ'ըսէ Լորա
Պայտըն - Փատըլ, "պէտք է
միշտ պարտաւոր ըլլայ դիմա-
ւորելու ոչ միայն հաշտանական
վտանգներ, այլ եւ մինչև իսկ՝
կարելի՛ դէպքեր:"

Որքան տարբեր կ'ըլլար

գոնէ մեր վերջին 20-30 տարուան պատմութիւնը և վիճակը, եթէ՝ ո՛չ թէ կարելի, այլ գոնէ հաշտանական, տեսանելի վրտանգներու հանդէպ պատրաստուած ըլլայինք: Անդիպցի մը եթէ այդքան անհրաժեշտ նկատած է ապահովել ինքզինքը ապագայի կարելի վտանգներու դէմ՝ մենք ինչո՞ւ պիտի գոցենք աչքերնիս իրական վտանգներու առջև:

Խօսքը տանք կրկին սկառտութեան հիմնադրին:

"Խաղաղութիւնը, կ'ըսէ ան, նուիրականութիւն մըն է մեզի համար: Բայց վատ մըն է ան՝ որ երբ սուրը կը աեսնէ վզին մօտ, կը թողու որ նապաստակի մը պէս անջատեն իր գլուխը մարմնէն: Չանա՛ խուսաբել հարուածէն, բայց մի՛ վախնար անկէ. ընդհակառակը զա՛րկ անոր՝ որ դիտես թէ պիտի չլինայէ քեզի:"

Այս համոզումով կրթուած եթէ ըլլայինք, կ'ունենայինք արդեօք "Ապրիլ 24" մը մեր պատմութեան մէջ...:

Հակառակ այս ճշմարտութեան սակայն, այսօր իսկ դեռ չունինք սկառտութեան ան-

հրաժեշտութեան համոզումը՝ ազգովին:

Սմերիկայի Միացեալ Նահանգներու նախագահը իր մէկ ճառին մէջ անդրադառնալով սկառտութեան բարիքներուն, զարմանք կը յայտնէր որ դեռ կան տղաք իր երկրին մէջ՝ որ սկառտական շարքերը մտած չեն (Միացեալ Նահանգները ունին մօտ մէկ միլիոն սկառտներ): Եթէ Սմերիկայի պէս երանելի երկիր մը անհրաժեշտ կը նկատէ իր պատանելութիւնը ամբողջութեամբ սկառտական վարժարանէն անցնել, ինչ պէտք է ընէինք մենք՝ հայերս... Արդեօք Հայաստան ու գաղթահայութիւն աւելի՞ ապահով ու երջանիկ են ֆիզիքապէս, տնտեսապէս եւ մշակոյթով, քան՝ Սմերիկա կամ Անգլիա:

Սկառտութեան մասին մեր հասկացողութիւնը հոն հասած է, որ ոչ միայն չենք օգներ անոր զօրացումին (պէտք է խոստովանինք որ դեռ շատ տկար է մեր մէջ ան), այլ և յաճախ կը տեսնենք ամէն կողմ՝ մեր առաջնորդներու արհամարհանքը, նոյն իսկ, շատ

անգամ կը զգանք անոնց հարուածը դեռ պատանի մեր սկառտութեան...:

Դժբախտութիւն է այս ալ՝ մեր վզին կառչած:

Երիտասարդներու և պատանիներու թողած է մեր մէջ սկառտութեան կազմակերպումը եւ ղեկավարութիւնը, երբ ուրիշ ազգերու մէջ համալսարանի ուսուցիչներ, կամ ուրիշ մտաւորականներ, ինչպէս եւ պետական ու զինուորական հռչակաւոր մարդիկ կը կատարեն այդ դերը: Հետաքրքրութեան համար յիշենք հօս, որ Պուլկարիսյ վեհապետը և գահաժառանգ իշխանը, ինչպէս Շուէտի գահաժառանգ իշխանը, գործօն դեր ստանձնած են սկառտական կազմակերպութեան մէջ: Իսկ քիչ չէ թիւն այն վեհապետներուն կամ հանրապետութեան նախագահներուն՝ որոնք կը հովանաւորեն իրենց երկրի սկառտական կազմակերպութիւնը:

Մե՞ր մէջ... Յետին թաղին վարժարանին թաղական էֆ.ին

իսկ չի զիչիր զբաղիլ այդ տեսակ "չօճուխի խնդիրներով"...

Պէտք է սակայն ըմբռնել վերջապէս, որ անհրաժեշտութիւն մըն է մանաւանդ մեզի համար՝ զօրաւոր սկառտութիւն մը: Եւ ամէն Հայ, ինչ գաւառանքի կամ կուսակցութեան ալ պատկանի՝ պարտի՛ մօտէն հետաքրքրուիլ սկառտական կեանքով, տալով անոր իր անվերապահ աջակցութիւնը, նութապէս կամ բարոյապէս, առանց սակարկոչքերու սակայն:

Այսօր վարդազոյն չէ մեր ազգային վիճակը: Վաղը յուսալից չէ մեզ համար: Այժմէն պէտք է պատրաստուիլք վաղուան փոթորիկները դիմաւորելու: Եւ քանի որ վաղուան ազգը այսօրուան պատանին պիտի ըլլայ, այդ պատանին պէտք է պատրաստել այժմէն:

Սկառտութիւնը պիտի կատարէ այդ դերը:

Գահիրէ

"Սկառտիգմը խանդավառող մարզանք մըն է, որ պատանին մէջ կը զարգացնէ կորովը, նկունութիւնը, ուժը եւ ռեւերուցիւնը, հասցնելով գայն այսպէս սկառտիգմի մէկ ուրիշ նպատակին, այսինքն պատրաստել արի մարդիկ:

Ան իր մէջ պարունակելով մէկտեղ մարզանքի բոլոր տեսակները, անոնց վրայ կ'աւելցնէ "հանցալի խաղ"ի առաւելութիւնը":

... ԵՒ ԾԱՌԱՅԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Գրուած Պուրկազի սկաւտներու երգման արարողութեան մը առթիւ:

Սեղանի մը վրայ, Աւետարան, Խաչ և Եռագոյն: Ազգային և կրօնական այս սրբութիւններուն առջև, սկաւտ պատանին, երկիւղածօրէն պատուի կեցած կարտասանէ:—

... Եւ ծառայել հայրենիքիս: Ահա Հ.Մ.Բ.Մ.ի գործը, նպատակի մեծութիւնը. երկու բռներ, որոնք արդէն ցոյց կուտան այն աշխատանքը, որը կը տարուի այս կազմակերպութեան մէջ:

Ի՞նչ կայ աւելի վսեմ, աւելի գեղեցիկ քան հայրենիքը և ի՞նչ աւելի քաղցր, քան երգումը — ծառայել անոր:

Պաշտամունքը ցեղի և հայրենիքի հանդէպ: Այդ, հոգեկան այն ոյժն է, խոռովիչ այն զգացումը, որ կը պահէ և կը յուսադրէ ժողովուրդները, որ զանոնք ապագայի, նպատակի գծին վրայ կը դարձնէ ստեղծագործ, մեծագործ:

Պետութիւն չկայ — բայց ո՞վ կընայ եղծանել, աղօտել հայրենիքի կարօտը մարդկային սրտին մէջ. ո՞վ կընայ խորտակել հոգեւոր հայրենիքը:

Հայոց պատմութիւնը փառքով լեցուն, հուր ու արիւնով, արցունքով և հերոսութեամբ զրուած նոր պատմութիւնը որ կը հոգեզրծէ, կը կերպարանէ նուիրումի հսկաներու դէմքը — ո՞վ ըսաւ, որ այդ պատմութիւնը վախճանի տխուր աղաղակ մըն է միայն:

Կենդանի պահել հերոսներու յիշատակը — մի՞թէ ատիկա ոգիի վերարձարծում չէ: Կը մեռնին անոնք, որ անցեալի համար զգացում չունին և ապագայի հանդէպ յոյս:

Եւ ծառայել հայրենիքին... Հայու Հայրենիքին: Ի՞նչ զգացում, ի՞նչ յոյս և ի՞նչ հաւատ:

Մեր ազգային իտէալները — առանց ցեղային խորքի, ի՞նչ իմաստ կայ անոնց մասին խօսիլ: Իտէալը այն ատեն միայն արժէք ունի, երբ կենդանի զգացում է:

Կենդանի պահել ցեղային ըզրացումը — ահա Հ.Մ.Բ.Մ.ի ճիգը:

Մեր ազգային իտէալները պէտք է կենդանի ոյժի վերածել, ցեղային հպարտանք ներշնչել

բողոքին, որպէսզի Հայը պայքարի կամք ունենայ և յարատեւումի ոգի՝ մինչև հայրենիքի ազատագրումը:

Հ.Մ.Բ.Մ.ի այս ուղղութեամբ տարած աշխատանքը, անչափելիօրէն մեծ է:

Հայրենասիրութիւնը ապրեցընող, հպարտանք ներշնչող ցեղապաշտութիւնը — ահա՛ այն դաւանանքը, որ ծանկի կը բռնէ հայ պատանի սկաւտը մեր ճակատագրին առջև — ճակատագիր, որ անյաղթահարելի կարօտի մը, հո.


գեղինացած հայրենիքի մը ուրիշ տըն է:

Հոս է Հ.Մ.Բ.Մ.ի գոյութեան իմաստը, անոր կենսունակութեան գաղտնիքը: Հ.Մ.Բ.Մ.ը երբեք պիտի չըլլար այն ինչ որ է եթէ իր նպատակը միայն "մարզանք"ը ըլլար, պիտի չտեսնէինք այսօր այն բազմութիւնը, որը խոնուած է անոր շուրջը:

Եւ Հ.Մ.Բ.Մ.ը միշտ պիտի ապրի՝ բանի իր սկաւտները կ'երգուն:—

"... և ծառայել հայրենիքիս":

Պուրկազ



ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Նստած՝ ձախէն աջ, Յակոբ Մահսերկեան՝ Առաջնորդ, Լեւոն Երկան՝ Վարիչ առաջնորդ, Կարօ Մարտիրոսեան՝ Սկաւտապետ, Յակոբ Ստեբանեան՝ Առաջնորդ:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ
ԵՒ

ՅԱՌԱՋԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քաղաքակրթութեան սկիզբէն ի վեր, իւրաքանչիւր սերունդի կողմէ և ընկերային բոլոր տեսակի կարգուսարքերու համար, պատանիներու դաստիարակութիւնը մասնաւոր հոգածութեան առարկայ եղած եւ անոր կատարելագործման համար զանազան կերպեր ջատագովումը են դարերու ընթացքին:

Սկաուտական շարժումին հետապնդած նպատակներն ևս կը ձգտին աշաներու յատուկ կըրթութեան այդ բազմազան կերպերու ամբողջացման եւ մասնաւորաբար անոնց նկարագրի կազմութեան:

Նկարագրերը, անձի մը իր ճշմարիտ կողմերը երևան բերող դիժնէ և ոչ թէ այն ինչ որ կ'ուզէ ցուցնել: Ան իր մտաւոր, բարոյական եւ ֆիզիքական գործերու նշանն է:

Զօրեղ և ջղուտ նկարագիր մը իր մէջ կ'ընդգրկէ մտածումի և գործելու անկախութիւն, անհատականութիւն եւ լաւագոյն մտաւորական և բարոյական խառնուածք:

Տղու մը մէջ նկարագրի կազմութիւնը կախում ունի ասպետական և բարոյական սկզբունքներու նկատումին իր ցոյց տայիք հասկացութեան եւ անոնց կիրառութեան:

Քսան տարեկանէն վար աւելցոյ, նկարագրի եւ անհատական ձեւերէն կը կազմուի զարգացման համար, անհրաժեշտ է մասնաւոր ուշադրութեան առարկայ ընել շարք մը առաքինութիւններ, ինչպէս ասպետական ոգի, քաջութիւն, հրնազանդութիւն, կարգ կանոն, զրկանք, կոկիկութիւն, բարոյական ոյժ, ուղղամտութիւն, կենցաղաւարութիւն, աշխուժութիւն, զուարթութիւն, ֆիզիքական զօրութիւն և համբերութիւն:

Անկախ այս բոլորէն, սկաուտութիւնը բաղադրութիւնն է, գիտող ըլլալու և եզրակացունել կարենալու, ձեռքի ու մարմնական ճարտարութիւն ունենալու և ճարտարօրէն գործելու:

Սկաուտութիւնը հայրենասիրութեան մասնաւոր ըմբռն-

նում մը և գիտակցութիւն մը կը ջանայ ներշնչել պատանիին, կը հրահրէ անոր ճարտարութիւնն ու ճարտարութիւնը գործելու ոչ թէ միմիայն իրեն այլ և ուրիշներու համար:

Սկաուտութիւնը տղաքը կը վարժեցնէ ծանօթանալու շարք մը պայմանագրական նշաններու, խոհարարութեան, բանակումի, առողջապահական կանոններու և վերաւորումի անմիջական օգնութեան յատուկ անհրաժեշտ գիտութեանց:

Ասոնցմէ ոմանք իրաւ է որ մաս կը կազմեն զինուորական կրթութեան, սակայն սկաուտի մը անհրաժեշտ են անոնք, իրեն վերապահուած դերը կատարելու համար ու հակառակ անոր, սկաուտութիւնը զուտ մարմնակրթական, մարզական և զինուորական կազմակերպութիւններէն կը տարբերի, որովհետեւ ան ունի իրեն յատուկ ոգի մը:

Այդ ոգին, հին ասպետականութեան, գեղեցիկ և ազնուական հիմնարկութիւններուն ոգին է, զորս սկաուտութիւնը կը վերստեղծէ զայն պատշաճեցնելով դարու պահանջներուն: Այսինքն իր հոգածու-

թեան գլխաւոր առարկան դարձնել ծառայելը և բարիք գործելը:

Շնորհիւ այդ ոգիին, սկաուտութիւնը, տղուն մէջ, գիտակից և կամովին ընդունուած կարգ ու կանոնով եւ կարգապահութեամբ կը զարգացնէ մարմնական ոյժը, պատուախնդրութիւնը, կամքը և իմացական ձիրքերը:

Համանմանութեան, ներդաշնակ ոգիի և համաչափութեան տեսակէտով, սկաուտական գործունէութեան համար անհրաժեշտ համարուած է համազգեստի դրութիւնը, ինչպէս նաև խմբակներու և խումբերու բաժանումները:

Մինչդեռ շնորհիւ խումբի և խմբակներու դրութեան կը ստացուի գործակցութեան դիւրութիւն, հազուաթի նմանութեամբ անոնք ա'լ աւելի կը թափանցեն սկաուտական ոգիին, ըլլալ բարեկամը բոլորին և եղբայրը ամէն ուրիշ սկաուտի:

Իր հիմնարկը լորտ Պէյտըն փառը, սկաուտական դաստիարակչութեան իր մեթոտին անունը դրած է «Մեծ խաչ»: Իր գտած յաջողութիւնները մի առ մի թուել երկար պի-

տի ըլլար. կը բաւէ յիշել որ շուրջ երեսուն տարիներ առաջ հիմնուած այս կազմակերպութիւնը այսօր միլիոնաւոր հետեւորդներ ունի աշխարհի զանազան կողմերը և գրեթէ բոլոր երկիրներու մէջ:

Բոլոր դարերու մէջ ալ սակայն, սկաուտներ գանուած են:

Բանակին մէջ անոնց տեղը ամենալտանդաւոր դժերու վըրայ է, ուր իր պաշտօնն է երկու ընդհարող բանակներու, մինչեւ անգամ՝ թիկունքն անցնելով տեղեկութիւններ բերել թշնամու շարժումներու վրայ յօք, կամ անոնց դիրքերուն մէջ, թիկունքէն շփոթութիւն յառաջ բերել: Սկաուտը բանակին աչքն է, այլ անուամբ դէպք:

Սկաուտներ եղած են նաև քաղաքակրթութեան յառաջացման մեծապէս սատարող գիտունները, ժողովուրդներու առաջնորդները, երկրախոյզները, որոնց օտարները տուած են Պիւսէր անունը: Ասոնք ոչ միայն անցեալի սկաուտները եղած են, այլ անոնց կեանքն ու գործունէութիւնը օրինակելի դրուագներ են այժմու ըս

կաուտներուն համար: Ասոնց կարելի է կոչել յազմութեան օրերու սկաուտներ:

Սակայն իր ոգիով և առաջադրութիւններով հին ատենները դոյութիւն ունեցող կազմակերպութիւնները, քրիստոնէայ առկետական ընկերակցութիւններն են այսօրուան սկաուտական շարժումին ամենամօտիկը:

Սկաուտը՝ անգլիերէն բառ մըն է Scout, որ կը մասնաւորէ այն խելացի և յանդուգն զինուորը որ իր բանակը կ'առաջնորդէ թշնամիի շարժումներուն շուրջ խուզարկութիւններ կատարելով: Իր հայերէն բառացի թարգմանութիւնն է հետախոյզ կամ՝ դէտ:

Հայոց մէջ, շնորհիւ մանուանդ Հ.Մ.Բ.Մ.ի, ան մեծ ընդունելութիւն գտաւ, սկաուտ անգլիերէն բառը հայերէնով փոխարինելու շուրջ եղան բազում ճիշդեր: Առաջարկուած անունները յիշատակութեան արժանի են, Արի, Արիակ (Boy-Scoutի իմաստը արու համար, ինչպէս առաջարկած է Մինաս Չերազ) և դէտ:

Փարթզ

Սկաուտ: Անմիջապէս որ այս բառը կը հնչէ սկանձիս կամ կը ներկայանայ աչքերուս առջեւ, մտքիս մէջ կ'ուրուագծուի առոյգ կերպարանքը քսաներորդ դարու պատանիին, Անգլիացի, Չինացի կամ Բելուցի, որ իր երեք մատերով բարեւ մը շինած՝ անխօս ըսել կ'ուզէ "պատրաստ եմ":

"Միշտ պատրաստ" այս կարգախօսին ամբողջ տարրութիւնը հայն է որ գիտէ, աւելի լաւ քան որեւէ մէկ Նոր Զեւանտացի կամ Ամերիկացի: Ու հայ սկաուտը աւելի բան մըն է քան որեւէ այլ պատանի, որովհետեւ ան իր դարուն վարանումները թօթափելէ զատ պարտականութիւն ունի ուրիշ կոչումներու: Անգլիացի սկաուտը կը սիրէ իր Աստուածը, մարդկութիւնը և իր հայրենիքը, հայ սկաուտն ալ կը սիրէ այդ երեքը, բայց անոնք իրեն համար աւելի ընդարձակ նշանակութիւն ունին քան անգլիացիին համար և մասնաւորաբար Հայուն Հայրենիքը տասնապատիկ աւելի կը սպասէ իր

սկաուտէն քան Ֆրանսան Ֆրանսացի սկաուտէն: Ահա թէ ինչո՞ւ, երբ "սկաուտ" բառին յառաջացուցած պատկերին մը շուրջ կը պարզանայ հետզհետէ, ու երբ կը տեսնեմ պայծառ երեւոյթը "Հայ սկաուտի", անասելի զգացումներ կ'ունենամ սրտիս խորը՝ ուր հայը կայ: Հայ սկաուտութիւնը կը բազմանայ, միշտ նորեր կը հաւաքուին իր շուրջը ճիշդ իրեն նման:

Ահա լուսաշող գումարտակը յանկարծ կը շարժի — չէ՛ գեռ մեծ երթը չէ — գրօշը դիտուն վերև, նուազի հնչուններով կը քալէ ան խոշոր ճամբէն: Կը հասնին լեռ մեր սկաուտները, մագլցումն է ու շաղբութիւն, վիշտ մացաներ կան, "հոնկէ մի՛ ցատկիբ Գրիգոր": Քիչ մը եւս, ահա յարմար վայր մը "տղաք, բացէ՛ք վրանները": Երկու վայրկեանէն բանակալայրը պատրաստ է: Օ՛ն, գրօշակը, "Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ":

Ուրիշ ճամբայ մը, երկու հազար քիլոմէթր անդին: Ճիշդ նոյնն է պատկերը: Ո՞վ նախասահմաներ է այս ամէնը սօվ է հրամայեր որ իրարմէ ծովեր հեռու, Հայ սկառուական խմբակներ շարժին նոյն ուղիով և զգացումներով: Լաւ, ասոնք երկու հայ խմբակներ են: Սիտնէյի մէջ Աւստրալիացիներն ալ բանակումի կ'երթան, բայց իմ հոգիին աչքերը կ'ըսեն ինձի թէ անոնք Հայուն պէս չեն զգար: Ուրեմն, դարձեալ, ի՞նչն է հասարակաց Հայ.

յերուն մէջ, մեր վզի թաշկի-նակները, բայց անոնց գոյնը կը փոխուի երկիրներու համեմատ, քաղաքօժքը, մեր հասակը, մորթին գոյնը: Մտիկ ըրէ՛ք ալ մի՛ հարցընէ՛ք, որովհետեւ ինչ որ կայ մեր ամէնուն մէջ անխտիր, արտաքին կերպարանքին հետ կապ չունի, այլ ա՛յն է որ կ'ուզենք տեսնել Հայուն Ատուածը աւելի դերահզօր, իսկ Հայուն Հայրենիքը տասնապատիկ աւելի պաշտելի քան որ և է մէկ երկրային դրախտ:

Գ. Կ. Տ. Ը.

Գ Ա Յ Լ Ե Ր Գ Ս Կ Ա Ո Ւ Տ Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ա Կ Ո Ւ Մ Ի

Tempo di marcia

Յա - ուջ Հ. Մ. Ը. Մ. Ի սկա-ու-ներ, յա - ուջ, յա-ուջ, բա-նա - կու - մի, հոն կը սպա-սնն քոյր ու եղ-բայր-ներ, յա-ուջ, յա- ուջ եւ միշտ յա -ուջ օն, բա-նա-կում, դու եւ մեր ի-տէա-ւ, օն բա-նա-կում, ինչ ա-նուշ ա-նուն:

Յառն՝ է Հ. Մ. Ը. Մ. Ի սկառուներ,
 Յառն՝ է, յառն՝ է, բանակումի,
 Հռն կը սպասեն քոյր ու եղբայրներ,
 Յառն՝ է, յառն՝ է և միշտ յառն՝ է:
 Օ՛հ, բանակում, դու եւ մեր իտեալը,
 Օ՛հ, բանակում, ի՛նչ անուշ անուն:
 Հեռու վայրերէ մենք կը հասաքոչիք,
 Ա՛մառ անոն, մենք քոչն չունինք,
 Գիշեր ցերեկ անդրոշ կ'աշխատինք,
 Բանակումի կը պատրաստուինք:
 Օ՛հ, բանակում, դու եւ մեր իտեալը,
 Օ՛հ, բանակում, ի՛նչ անուշ անուն:

Tempo di marcia — խանդավառ Գաշնաորեց՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

Հայ ա - թի- ներ ենք կարգա- պահ Հ. Մ. Ը. Մ. Ի դրօշին շուրջ, Աշխատանքներ ունինք բա- գում, Ծրագիր-ներ վր - սեմ ու լուրջ: Հա-ւա-տա- ը իմ նախ Աստուծոյ, սու- ճոյդ, Երջ-ուա- ուու Թեան դէմ ոչ ան- փոյթ, Ազ-գիւղ հա-մար միշտ աշ- խատէ, Ե- դիր բա-րի ոչ որ ա- տէ:

1059-54

Հայ արիներ ենք կարգապահ
 Հ. Մ. Ը. Մ. Ի դրօշին շուրջ,
 Աշխատանքներ ունինք բազում,
 Ծրագիրներ վսեմ ու լուրջ:
 Հաւատարիմ նախ Աստուծոյդ,
 Թշուառութեան դէմ՝ ոչ անփոյթ,
 Ազգիդ համար միշտ աշխատէ,
 Եղի՛ր բարի ոչ ոք տէ:

Ո՞վ Հայ արի նախ բարձրացիր,
 Մարմնով, մտքով հսկայ դարձիր,
 Չանք, ճիգ թափէ դու ամէն օր,
 Գործադրելու բարիք մը նոր: (*)
 Բարձրանանք ու բարձրացնենք,
 Անյարժ մնայ հայ ազգը,
 Ուրախ ըլլանք, երգենք զուարթ,
 Ապրի յաւէտ Հ. Մ. Ը. Մ. Ի:

Հ Ա Յ Ա Ր Ի Ն Ե Ր

Ի՛րիք, կայտառ հայորդիներ,
 Կենաց բարեւ տանք խնդագին.
 Գէպի բնութիւն մեզի հրաւէր
 Կարդայ արեւն ալ ժպտագին:
 Գնդեր ու ջիղ եռանդ ու բոց,
 Արիներ ենք մենք անըրկուն,
 Վտանգ ու ցաւ, արգելք ու խոց
 Սարսափ չ'ազդեր մեր վեհ հոգւոյն:
 Օ՛ն, բարձրացի՛ր ու բարձրացու՛ր,
 Այս թող ըլլայ մեր նպատակ.
 Վերելքին մէջ մեր առաթուր
 Փշրենք խութեր սոքի տակ:
 Կեանքի համար թոխիք անենք,
 Մե՛րն է ոսկի ապագան.
 Հեռու մենէ նախանձ ու նենգ,
 Մեզմով ապրի Հայաստան:
 Մեզմով յաւէտ պիտի ապրի
 Ապրի՛ յաւէտ Հայաստան:

(*) Այս երգին Յրդ տունը երգել 2րդ տունին նման եւ վերջին 4րդը՝ առաջին տունին եղանակով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՍ.ՂԱՓԱՐԱԿԱՆԸ

Հայրենագուրկ և վտարանդի, օտար հորիզոններու ներքև նոր սերունդը կ'ապրի դժնդակ օրեր: Հայ Պատմութեան մէջ եթէ կայ սերունդ մը որ ցմբուր քամեց կեանքի բոլոր դառնութիւններն ու դաժանութիւնները այդ մեր սերունդն է — Ապրիլեան մուսլ օրերու սերունդը:

Ի պատիւ այս նորահաս երիտասարդութեան պէտք է արձանագրել սակայն, թէ ըս. փրօքի խորթ և նիւթապաշտ միջավայրերու մէջ, հեռու հայրենական միջնորդէ, ան ունեցաւ իր ցեղի բարձր արժանիքներու դիտակցութիւնը: Չստրկացաւ օտարներու առաջ, չենթարկուեցաւ ապաղգային հոսանքներու, և միշտ վեր բռնեց իր ցեղի հալածական դրօշը, զայն ի հարկին պաշտպանելով նոյնիսկ հայանուն վարձկաններու հալածանքին դէմ:

Հ.Մ.Ը.Մ.ը նորահաս այս երիտասարդութեան ազատատենջ ձգտումներուն մէկ ար-

տայայտութիւնն է. մարզական իր երեւոյթով, բայց ազգայնական իր բնոյթով:


Գաղթաշխարհի մէջ շատ քիչ բան ունինք ակտիւարար: Քիչերուն մէջ իր ուրոյն տեղն ունի մեր բոլորին սիրելի այս կ'ազմակերպութիւնը, որ իր հայրենասիրական շունչը գաղութէ գաղութ կը փոխանցէ համակ նուիրումով ու ջերմեռանդութեամբ:

Իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ. ական կամ Հայ Արի մեղ կը ներկայանայ իբրև արժանաւոր ժառանգորդը մեր ցեղի փառաւոր անցեալին, և վրիժառու ներկայացուցիչը անիրաււած Հայութեան մարտնչումներուն:

Հաստատ համոզումն ունինք որ Հ.Մ.Ը.Մ.ը, ինչպէս անցեալին, նոյնպէս և ապագային պիտի մնայ միշտ ազատատենջ Հայութեան կողքին, և քալէ անյողդողդ միլենոյն առաջադրութիւններով, միշտ ելակէտ ունենալով մեր ցեղի դարաւոր խաչալները:

Ամման

Բուլբուր Սքիվընսըն Սմիթ: Պէյտըն-Փաուըլ, ճանչցուած իբր "չիֆ սկաուտ" (սկաուտապետ) կ'իւրաւելի Լօրտը, ծնած է Լոնտոն 22 Փետր. 1857ին: Վեցերորդ գաւակն է Օքսֆորտի վեր. ֆրոֆ Պէյտըն-Փաուըլի նշանաւոր գիտնական կրօնագէտ, բայց խեղճ Բուլբուր հայրական պաշտպանութենէ զուրկ մնաց իր երեք տարեկան մանուկ հասակէն իվեր:



ՊԵՅՏԸՆ-ՓԱՈՒԸԼ

Իր կնքահայրն էր Բուլբուր Սմիվընսըն, երկաթուղիի հնարիչին գաւակը: Իր մայրը կը պատկանի մեծահամբաւ Սմիթ ընտանիքին, որոնց սերունդէն էր Քաֆթըն շոն Սմիթ, որը (1579-1631) մեծ համբաւ շահեցաւ վըրճինիոյ յաղթանակով:

Գրեթէ մինչև 12 տարեկան հասակին բացօդայ կեանք մը վարեց, և անկէ ետքն էր որ սկաւ նախակըրթարան յաճախել: Աւարտելով կը մտնէ Չարթըրհաուսի դպրոցը: Այս դպրոցը յաջողաբար լրացնելէ ետք կը պատրաստուէր Օքսֆորտ մտնել: Երբ բախտը ունեցաւ 1876ին "Հուգարներու 13րդ գորագունդ"ին հետ Հնդկաստան ճամբորդել: 1887-9 զինք կը գտնենք Հարաւային Աֆրիկէ, պատերազմական ատենին ֆոն-Քարտուզարի պաշտօնով: Այս շրջանին կը կատարէր առանձին պտոյտներ և կը զբաղէր գրականութեամբ: 1895ին "Տրդ Տրակըն Կարտեր"ու հրամանատար կարգուելով կը փոխադրուի Աշանդի, միլենոյն ժամանակ կը ստանանէ նաև տեղական ոստիկանութեան հրամանատարի պաշտօնը: Հարաւային Աֆրիկէի Պորեան պատերազմի շրջանին ան պատասխանատու կը կարգուի Մէյֆթինի քաղաքին, ուր սքանչելի կերպով կը դիմադրէ 215 օր, հակառակ անոր որ սովն ու հիւանդութիւնը անպակաս էին, և իր ձեռքին տակ ունէր միայն 1700 կանոնաւոր զինուորներ: Վերջապէս այս պատմական դիմադրութիւնը մեծ համբաւ և ժողովրդականութիւն շահեցուց իրեն: Այսպէս աստիճանական բարձրացումով հասաւ մինչև ասպետութեան աստիճանին, և 1910 ին քաշուեցաւ զինուորական ասպարէզէն:

1908 ին հիմը դրաւ սկաուտական շարժումին նպատակ ունենալով բարձր պահել ազգայնական ոգին նոր սերունդին մէջ: Անմիջապէս այս կազմակերպութիւնը տարածուեցաւ աշխարհի բոլոր կողմերը և ինք կը ճանչցուի իբր սկաուտապետ: (Chief Scout): Ներկայիս սկաուտական շարժումը ամէն ազգ կը քաջալերէ տարբեր ձևերով բայց նոյն նպատակով:

ՄԱՐԶԱՆՔԻՆ ԳԵՐԸ ԱՆ ՀԱՏԻՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԵՒ

ԱԶԳԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ

'' Մարմինը որքան զօրաւոր է, այնքան կը հնազանդի, որքան տկար է, այնքան կը հրամայէ: '' ԺԱՆ ԺԱԳ ՐՈՒՍՕ

Ապրելու, ապրեցնելու և ապագայ սերունդը ապահովելու փափաքը բնածին է իւրաքանչիւր անհատի մօտ առաւել կամ նուազ չափով:

Երկրագնդիս վրայ ամէն էակ կեանքի որոշ շրջան մը բոլորելու նախասահմանուած է, կ'ապրին միայն անոնք որոնք ուժով ու կենսունակ են ֆիզիքապէս:

Իսկ ապրելու համար պէտք է պայքարիլ անդադար. քանզի բնութիւնն ու համայն տիեզերքը խաղաղութեան տրամադիր չէ եղած բնաւ և չէ ա'լ պայքարը — զանազան ձևի տակ — միշտ կայ ու կը մնայ յաւիտեան:

Հետեւաբար, մարդ, այսպէս կոչուած կեանքի պայքարին դիմադրելու և տոկալու համար, նախ ֆիզիքապէս զօրաւոր, կենսաբանականօրէն առողջ ու կազմախօսականօրէն ջլապինդ մարմին մը ունենալու է:

Այդ ֆիզիքական և օրկանական տոկունութեան նախապայմանն է համաշար մարզանքը՝ կանոնաւորաբար:

Բայց, դժբաղդաբար, մեր մէջ շատ շատեր մարզանքը պարզապէս ժամաւաճառութիւն կը նկատեն առանց անդրադառնալու և դնահատելու անոր ունեցած բարերար ազդեցութիւնը անհատական առողջութեան ու ցեղապահպանման անհրաժեշտութեան տեսակէտով:

Բնութեան մէջ ուժն է որ կը գործէ, կ'արտադրէ, կ'ըստեղծագործէ. այդ տիեզերական անվիճելի օրէնքէն բացառութիւն կազմող ոչինչ կայ:

Իսկ մենք, քանի որ ժառանգական օրէնքներուն տըրամադրութեանց համաձայն հարկադրուած ենք մեր հիւլէէն մաս մը — ֆիզիքական և հոգեկան մասնիկներէն — փոխանցելու մեր սերունդին,

ուրեմն, մեր լաւագոյնը կտակելու համար մեր զաւակներուն, պէտք է ֆիզիքական կրթութեան օգուտները դնահատել ու նպաստաւորելի անոնց պարզեւած բարիքներէն, մեր ցեղային կենսունակութիւնը մշանջենաւորելու և ապագայ հիասթափումներէն խուսափելու համար ընդմիշտ:

Այժմ, բոլոր ազգերն ալ — մեծ ու պզտիկ — գերբնական ճիգեր կը թափեն ու միլիոններ կը յատկացնեն մարզարաններու և զանազան ձևի մարզանքներու համար, իրենց մատաղ սերունդին բընախօսականօրէն առողջ ու զօրաւոր մարմին մը պարզեւելու և լաւագոյնս ապահովելու ու կրկնապատկելու ապագայ սերունդին դիմադրողական ուժը՝ ազգին տեսականացման համար, որովհետեւ ժողովուրդներու դոյութեան համար նոր սերունդին ֆիզիքական համաշարի դաստիարակութիւնը կենսական և վճռական կարեւորութիւն ունի:

Օրինակի համար — բազդատեցէ՛ք նախապատերազմեան ու յետ պատերազմեան, կամ լաւ ևս ֆաշական իտալեան,

ու հսկայ տարբերութիւն պիտի տեսնէք. առաջինը, գրէթէ թուլամորթ և պատեհապաշտ, իսկ երկրորդը, ազգաշունչ, կորովի, միաձոյլ ազգային ճակատի մէջ, որովհետեւ ֆաշական ռէժիմը առաջին օրէն իսկ դիտցաւ նոր սերունդը ֆիզիքապէս մարդէլ ամենաարդիական մեթօտով և մանկավարժական հիման վրայ:

Գիտակցելով որ, ազգային յառաջդիմական, զննորականութեան ու ազգաց մէջ իր արժանաւոր տեղը գրաւելու համար, նախ պէտք է ֆիզիքապէս կազմակերպուած ուժ ունենալ. ահա՛, անոնք ստեղծեցին այդ ահաւոր ուժը: Ու իւրաքանչիւր անհատի հոգւոյն մէջ արծարծեցին ազգային խոր դիտակցութիւնն ու մանաւանդ հպարտութիւնը, հիմք ունենալով ֆիզիքական մեթօտիկ կրթութիւնը՝ լաւագոյն պայմաններով:

Ահա՛, այս միջոցներով է որ տկարը կը զօրանայ ու արիւն կը ստանայ ապրելու, մաքաւելու համար:

Իսկ մենք, Հայերս, պետական առանձնաշնորհումներէ ու նիւթական աջակցութենէ զուրկ

բացարձակապէս և ընդտեւական ահաւոր կացութեան պատճառաւ, գրեթէ անբաւարար ենք մեր ցեղային ինքնուրոյնութիւնը անեղծ պահելու, ներկայ ազգայնամուլ դարուսու ալլասերման յորձանքին մէջ:

Ուրեմն, մենք առաւել եւս պէտք ունինք քաջառուջ սերունդ մը, ազգապահպանման տեսակէտով, գիմակալելու համար ամէն պատահականութեանց՝ ֆիզիքական մարդին մէջ, որը դարձեալ միայն համաչափ մարդանքի միջոցաւ կը ստացուի:

Ժողովուրդի մը կենսունակութիւնը կախում ունի նախ և առաջ իր ֆիզիքական բարութութենէն:

Ահա՛, այս է դարերու պատգամը ու մարդկային պատմութեան անհերքելի վիճակը:

Արդ, նկատի առնելով, ազգովին մեր մատնուած ահաւոր կացութիւնը, իւրաքանչիւր Հայ, յորդիի հոգւոյն մէջ ազգային շիւղը պէտք է լարուած մնայ միշտ, ու զործէ ցեղապահպանման իտէային գիտակցութեամբ՝ առանց այլևայլի, ապագային իբրև ուրոյն ազգ

ապրելու իրաւունք ստանալու համար:

Այժմ՝ մենք, ցրուած ի ըսփիւս աշխարհի, ստիպողական պահանջքն ունինք մեզ իրարու զօգուլ անդակտելի հանգոյցի մը մեր ֆիզիքական, բարոյական և ազգային գոյութեան հրատապ հարցը իրականացնելու ու նոր սերունդը ճերմակ Ֆարգէն զերծ պահելու համար, որը այս պահուստ աւելի հրամայական և ճակատագրական պարտք մըն է քան երբեք:

Այս Սրբազան գաղափարականը իրականացնելու գերին մէկ խոշոր մասը ստանձնած է "Հ.Մ.Բ.Մ."ը գալթաշխարհի մէջ: Ան, Հայ անհատին — մասնաւորաբար մատուց սերունդին — ֆիզիքական և բարոյական վերելքին կը նպաստէ, ի խնդիր Հայութեան տեսակաւնացման:

Գիտակցելով որ ազգի մը անկունքաբոլ և հիմքը կը կազմէ նոր սերունդը, Երիտասարդութիւնը:

Ահա՛, գերազանցապէս, այս է անոր ընդգրկած նպատակն ու իտէալը ազգային հասարակական կեանքի մէջ, առանց

ուէ հատուածի, հոսանքի և յարանուանութեանց խտրականութեան բնոյթ ունենալու՝ զուտ ազգային հարցերու նըկատմամբ:

Բայց, ցաւալի է որ հոսու հոն, անձատողական խրտուիլակներ լարծուն գեանի վրայ կը գործեն այս սրբազան միութեան հանդէպ:

Այս նկարագրի անանկ ողորմելիները աննպատակ ու նախապաշարեալօրէն ապակեղրոնացման կը գիմեն առանց խտրութիւն դնելու միջոցներու մէջ:

Որովհետեւ, ասոնք սկզբունքէ զուրկ են ու ընազդաբար ազտու պայքարի կը մղուին առանց կանխամտածելու արդիւնքի մասին:

Ամէն Հայու գերագոյն նըպատակը պէտք է ըլլայ "Ազգային Սրբանապատուութիւնը" և զօրափոխ կանգնիլ անոր ի գին ամէն զոհողութեանց, եթէ չենք ցանկար կամաւոր մեռելութեան զատապարտուելու անողք պատասխանատուները ըլլալ սուղապայ սերունդին և պատմութեան առջև:

Պէյրուիթ

ԲԱՐՁՐԱՅԻՐ ԲԱՐՁՐԱՅՈՒՐ

"Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր" ասկէ լաւ նշանաբան մը չէր կարող ունենալ Հ.Մ.Բ.Մ.ի սկսուողը. այս երկու բառերը՝ իբր մէկ խորհուրդ, յղացումն է թուաբանագէտ Պետրոս Արարուի որ մօտէն հետաքրքրուած է Հ.Մ.Բ.Մ.ով: Նշանակը գծած է Ստեփան Ականան իսկ Չիթունին կը նկարագրէ զայն հետեւեալ ձևով:

"Մօտեցէք ու խոր դիտեցէ՛ք. — Կըր Երջանակի մը մէջ սլացիկ, ալեփարթամ բայց միշտ առոյգ բարձրութիւնը՝ Արարատ լեռը, արեւու շողերովն օծուն. ահա նշանակը, հարազատ, հայեցի և տիեզերական:

Արարատին վրայ ծիածանուած է երկու բառ, — «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր», — երկու բառ, այո՛, բայց երկու ոսկի կանոն. ե՛ւ անհատի, ե՛ւ ազգի, ե՛ւ մարդկութեան ուղղուած երկու վսեմ քարոզ, հանգանակ կամ կրօնք մը:

— Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր: Հայուն ազգային ոգին է որ կը խօսի անոր մէջ: Հայ համամարդկային այլատէր, ոչ ետասէր ոգին:»*

Հ.Մ.Բ.Մ.ի սկսուողական գլխարկի կամ գօտիի վրայի նշանակը սլարաստեր է Նիկաղոս Յ. ձիգմէճեան, հայրը Հ.Մ.Բ.Մ.ի հիմնադիր անդամներէն՝ Հայկ ձիգմէճեանի: Թէոդիկ իր 1927ի տարեցոյցին մէջ կը կոչէ զինք «մեծահամբաւ արուեստագէտ արծաթագործ»: Այդ շրջանին ձիգմէճեան պատրաստեց երեք արծաթեայ «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր» նշանակներ սկսուողական գօտիի համար:

Այս երեք գօտիները Հ.Մ.Բ.Մ.ի վերին մարմինը իբր գնահատանք նուիրեց Զաւէն Պարփարքին, Պետրոս Արարուիին և ուսուցչապետ Լեոն Թաշճեանին:

Լ.

* « Ասուլիս Հայաստանի »

Ճ Ա Մ Բ Ա Ր Ը

Սկսուածներու բերնին մէջ ա- նուշ բառ մըն է ձաւքարը, որը չորս տարին անգամ մը առ նը- ուագն, կը պտըտի հագարաւորնե- րու շրթունքներուն վրայ:

— Պիտի մասնակցի՞ս այս ճամ- բարին:

Իրարու կը հարցնեն աշխարհի չորս ծագերուն բնակող սկսուած- ներ, ամէն անգամ որ մօտենայ նոր ճամբարի մը թուականը:

Եւ ու զեռ մը կը պայթի պա- տանիններու աշխարհին մէջ ու խանդավառութիւն մը կը տիրէ իրենց ու իրենց բարեկամներու շրջանակին մէջ: Աշխարհի աւելի քան երկու միլիոն սկսուածներէն ընդհանրապէս հազիւ 30-50 հա- զար հոգին կը մասնակցին անոր, ու անգամ մը ճաշակած անոր քաղց- րութիւնը՝ տեւական "յաճախոր- դ"ը կը դառնան անոր:

Դիւրին չէ անշուշտ պատկե- րացնել զայն զրջով: Պէտք է ասորիլ զայն հասկնալու համար թէ ի՞նչ կը նշանակէ ձաւքար:

Ճամբարը (միջագգ, լեզուով "ճէմպորի"), սկսուածական բառարա- նին մէջ կը նշանակէ միջագգա- յիւ մեծ քանակոյտն: Այսինքն, աշխարհի բոլոր մասերուն վրայ

գտնուող սկսուածներ չորս տարին անգամ մը կը հաւաքուին նախոր- րորուած թուականի մը՝ հոս կամ հոն, երկու շաբաթ բանակելու համար միասին: Բանակումնը՝ ի հարկ է անոնք սովորաբար արդէն կը կատարեն աւելի յաճախ, ա- լելի երկար թերեւ՝ իրենց բնա- կավայրերուն մէջ: Սակայն մեծ տարբերութիւն կայ ճամբարին և պարզ այդ բանակումներուն միջև:

Նախ՝ մինչեւ ճամբար, կան ճամբորդութեան զանազան հա- ճոյքները, փորձառութիւնները, ծանօթացումը զանազան երկիր- ներու և ժողովուրդներու, եւլն., որոնցմէ կրնայ օգտուիլ ուշիմ սկսուած մը: Յետոյ, երբ ան հաս- նի ճամբարի բանակավայրը, ինք- զինքը չի գտներ լուռ ու ամայի անտառի մը մէջ առանձին: Ընդ- հակառակն ան շրջապատուած կը զգայ ինքզինքը բազմահազար այլազգի պատանիներով, եկած ոմանք Չինաստանէն կամ Ճարո- նէն, ուրիշներ՝ Ամերիկայէն կամ Չեղանտայէն, հոս Հնդկ մը կը տեսնէ, հոն ավիրկեցի խար- շիկ մը, եւլն., եւլն.: Տեսակ մը մանրանկար աշխարհ է ճամբարը, կամ եթէ կ'ուզէք ազգերու ցու-

ցահանդէս մը: Քրիստոնեան, մահ- մետականը և պոլոտոյականը հոն են քով քովի, ուր կ'ապրին ա- նոնք 15 օր միասին առանց ուէ անհասկացողութեան կամ միջա- դէպի: Ընդհակառակն աւելի լաւ կը ճանչնան զիրար ու անկեղծ բարեկամութեամբ կը կապուին իրարու:

Միջագգային նման հաւաքոյթի մը առաջին փորձը կատարուեցաւ 1913ին, Անգլիոյ Պիրմինհէմ քա- ղաքին մէջ: Այն ատեն այդ հաւա- քոյթը կոչուեցաւ Սկսուածական Միջագգային Հաւաքոյթ, որուն մասնակցեցան, բացի 30 հազար անգլիացիներէ, չորս հինգ հազար ալ օտար սկսուածներ, որոնք կը ներկայացնէին տասներկու երկիր- ներ: Կազմակերպուած Հայկ Ըս- կառուութիւն մը չկար դեռ այն ատեն (եթէ չհաշուենք դպրոցա- կան քանի մը խումբեր): Մինչև այդ թուականը չատ ցեղերու պատանիներ տակաւին շիման մէջ չէին իրարու հետ, ու հոն է որ բռնկեցան բարեկամութեան ու եղբայրական սիրոյ կայծերը:

Բայց որդիներու ստեղծած այդ ազնիւ կապերը կտրուեցան կոպ- տօրէն, իրենց հայրերու սուրով՝ 1914 ի համաշխարհային պատե- րազմով: Պատերազմը քանդեց

ինչ որ Պէյտըն Փառուլ կը ջա- նար կերտել: Բայց խաղաղութեան այս մեծ ուսուցիչը առանց յու- սահատելու, 1916ին, առաջարկեց ձեւապարտի մը կազմակերպել 1918ին, եթէ մինչ այդ պատե- րազմը դադրած ըլլար: Այդ թուականին է որ սկսուածական աշխարհին մէջ առաջին անգամ ըլլալով շրջան ընել սկսաւ այս նոր ու կախարհիչ բառը:

Պատերազմը լրացած էր 1918ին, բայց դեռ յարմար պահը չէր միջագգային կեանք մը ստեղ- ծելու համար: Աւելի լաւ պայ- մաններու մէջ, 1920ին է որ տե- դի ունեցաւ առաջին պաշտօնա- կան ձաւքարը՝ Լոնտոնի մէջ:

Այս ճամբարի ընթացքին է նաև որ հիմը դրուեցաւ Սկսուածա- կան Միջագգային կոմիտէին, որը իրաւունք ստացաւ իր հսկո- ղութեան ու ղեկավարութեան տակ առնել աշխարհի ամբողջ սկսուածութիւնը: Ատկից ի վեր սկսուածական կանոնաւոր և իրա- ւասու կազմակերպութիւն կը նը- կատուին անոնք որոնք վաւե- րացուած ու ճանչցուած են Մի- ջագգ. կոմիտէին: Հոն է դարձ- եալ, որ Պէյտըն Փառուլ հռչակ- ուեցաւ համայն աշխարհի սկա- ուտներու Ընդհ. Պետ մինչև մահ:

Երկրորդ ճամբարը կազմակերպուեցաւ 1924 ին՝ Քոփենհակի մէջ (Դանիա)։ Այս ճամբարին է որ Պէյտըն փառուը ստացաւ "Բաղնեպան" տիտղոսը, որովհետեւ իր ժամանման օրն իսկ տեղատարաւ անձրև մը ընկերացաւ իրեն։ Աւ աստից իվեր այլևս անակնկալ մը չէ անձրև ունենալ երբ Պէյտըն փառուը ներկայ է մեծ հաւաքոյթի մը։

Դանիացիք՝ հիւրասէր ժողովուրդ, ամբողջ ութ օր իրենց ընտանեկան յարկերուն տակ հիւրընկալեցին բոլոր օտար սկաուտները։

Կուգայ 1929ը։ Պէյտըն փառուը ի երազն է սկաուտներու խոշոր թիւ մը հաւաքել աշխարհի բոլոր մասերէն, ու 15 օր միասին ապրեցնել զանոնք։ Պիրբըն հէտի մէջ (Անգլիա) երեսուն հազար հոգի համար ծրագիր մը կը պատրաստուի ու կը խնդրուի բոլոր երկիրներու վաւերական կազմակերպութեանց ղեկավարներէն՝ «ամէն ջանք զործադրել այդ թիւը լրացնելու համար»։ Պատասխաններէն յայտնի կ'ըլլայ սակայն որ այդ թիւը պէտք է բարձրացնել երեսուն եւ հինգ հազարի։ Յետոյ՝ քառասուն հազարի, աւելի ուշ՝ քառասուն եւ

հինգ հազարի, յիսուն հազարի...

Այս աճումը նոյն ձևով պիտի զարգանար անշուշտ, եթէ կազմակերպիչները չվախնային ու խելօքիկ մը վերջակէտ չդնէին անոր քով։

Այս ճամբարը մօծ եղաւ ոչ միայն մասնակցողներու թիւով, այլ եւ սկաուտական աշխարհի մէջ յառաջ բերած իր անսովոր խանդավառութեամբ։ Այս ճամբարին է նաև որ առաջին անգամ ըլլալով Հայ Արիները ներկայացան պաշտօնապէս՝ իբրև Հայաստանի ներկայացուցիչներ։ Անոնք հոն սքանչելի առիթը գտան ոչ միայն օգտուելու օտարներու փորձառութիւններէն ու սորվելու նոր մէթոտներ, այլ եւ 50 հազարնոց պատանեկան բանակի մը առջեւ ցուցադրելու Հայկ. տոհմիկ պարերը Հայկ. տարագրով, Հայ երգը լսելի ըրին անոնք բոլորին ու խօսեցան եռանդով Հայաստանի մասին։ Քանի մը օրուան մէջ արդէն ահագին խանդավառութիւն ու համակրանք ստեղծեցին անոնք Հայաստանի ու Հայ անուան շուրջ։ Քառասուն եւ վեց երկիրներ ներկայացած էին այդ ճամբարին, առանց հաշուելու անգլիական կայսրութեան երկիր.

ները (որոնցմով այդ թիւը կը հասնէր 72ի)։

Այդ ճամբարին է նաև որ Անգլիոյ Ճորճ Ե. Թագաւորը Լորտի աստիճանը տուաւ սկաուտութեան մեծանուն հիմնադիր՝ Պէյտըն փառուըին։

Գ.րդ ճամբարի կազմակերպումը

պումը վիճակուեցաւ Հունգարիոյ Պուտափեստի մօտ, արքայական ամառանոց Կէտտօլլէոյի անտառներուն մէջ է որ, 1933ին Հունգարացի ազնուական ժողովուրդը պատուեց ամենազգի պատանեկութիւնը։ Իսկ Հայ Արիները վըստահաբար իրենց լաւագոյն օրերը ապրեցան Պուտափեստի հայ.



Օր. ՊԵՅՏԵՆ-ՓԱՍՏԻՆԸ ԹԷՅ Կ'ԱՌՆԵ ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԱՄԲԱՐԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՖՕՂԵԼԵՆՏԱՆՂ (ՀՈՒՍՆՍԱ)
Օր. Պէյտըն փառուըի աջ կողմին է Տօթթ. Գուրկն Սեճատուրեան, իսկ առաջին կարգի ձախտն աջ երկրորդն է Ն. Օ. Խաննեան մեր աշխատակիցը։

կական զազութին հետ 1933ի Օգոստոս ամիսը անչնչելի յիշատակ մը դարձած է մեզ Հայ սկաուտներու, ինչպէս Պուտափեստի Հայկ. զազութին համար, որուն անդամներէն շատեր կորսընցուցած Մայրենի լեզուն, կարօտով մը կը զիտէին մեզ ու կը լսէին հայերէն երգը։

Ե.րդ ճամբարը կազմակերպուեցաւ Հոլանտայի Ֆոլդենդանդ փոքրիկ քաղաքին մէջ 1937ին։ Աւելորդ կրկնութիւն մը պիտի ըլլար անգամ մը եւս նկարագրել այն ինչ որ իր գրեթէ ամէն մանրամասնութիւններով ծանօթ է արդէն բոլորին՝ Հայ մամուլի միջոցաւ։ Թարմ է դեռ յիշողու.

թիւներու մէջ՝ Հայ տղոց ունեցած յաջողութիւններն ու իրենց եղած պատիւները, ինչպէս և անոնց կատարած հիանալի բրոպականտը երկրէ երկիր Հայ անուան շուրջ: Գեղեցիկ դաշտ մըն է ճամբարը՝ ազգային բրոպականտի, ու այդ պատճառով շատեր կու գան հոն մեծ պատրաստութիւններով:

Հիանալի են, օրինակ, հունգարացիներու, լեհերու, ամերիկացիներու և անգլիացիներու կատարած կազմակերպական ու բրոպականտի աշխատանքները:

Հայ տղաքը միշտ մասնակցած են ճամբարներուն գրեթէ միշտ անձնական ոյժերով ու պատանիներու աշխատանքով: Իսկ անդին ուրիշներ որոնց գրեթէ պէտք ալ չունին օժանդակութեան, կը քաջալերուին իրենց պետական ու այլ իշխանութեանց կողմէ:

Որքան ուրախալի պիտի ըլլար որ տասնապատկուէր ճամբարներու մասնակցող հայ սկաուտներու թիւը, որքան իրենց, նոյնքան իրենց ազգին օգտին համար:


Հայ Սրիները չկրցան ցարդ 50 հոգիէ աւելի զրկել ազգերու այդ ցուցահանդէսին: Այդ քանի մը տասնեակ տղոց ուսերուն

ծանրացած էր Հայութեան արժէքն ու արժանապատուութիւնը ճանչցնելու պարտականութիւնն ու իրաւունքը: Անոնք ըրին իրենց կարելին, նոյնիսկ իրենց ոյժերէն վեր շատ փորձեր յաջողութեամբ պսակելով յաճախ Սահայն, վըստահաբար շատ աւելի մեծ արժէք կը ստանան այդ բոլոր ճիգերը, եթէ հաւաքական գործակցութեամբ ու մտածուած ծրագրով մը նախապատրաստուին: Ու մանաւանդ՝ եթէ գաղութներու մէջ տարտղնուած ու իրարմէ անտեղեակ Հայ սկաուտութիւնը կարենայ հաւաքուիլ մէկ դըրօշի շուրջ, հաւաքական ու իրական ոյժով ներկայանալով սկաուտական միջազգային մրցահանդէսին:

Յուշիկայ ճամբարը պէտք է տեղի ունենայ, ըստ սովորութեան՝ (չորս տարին անգամ մը) 1941ին, դեռ ոչ ոք գիտէ թէ ո՞ւր:

Յուսանք որ մինչև այդ թուականը իրականացած ըլլայ մեր փափաքը, այս անգամ ալ առանձին չթողելու համար Հայ Սրիները՝ իրենց այժմու ոյժերով ներկայացնելու Հայ պատանիին (ինչո՞ւ չէ՛, նաև Հայ Ազգին) պատիւն ու արժէքը՝ յառաջիկայ ճամբարին:

Գահիրէ



ՀՈՒՊԸՐԴ ՄԱՐԴԻԿՎՈՂՋՈՒՆԵ ՅԱՅ ԱՐԻՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԱՄԲԱՐԻ ԸՆԹԱՅՔԻՆ ՖՕՂԵԼԵՆՋԱՆԸ (ՀՈՒՍԱՏԱ):
Ձախէն աջ՝ ՏօթՍ. Մակարոս Գազանճեան (Եգիպտոսի Շըջ. դետ.), Ս. Ֆարչեան (Գործ. Խորհ. Ի Գանձապետ) Շուպրոզ Մարդին եւ ՏօթՍ. Գուրգէն Մեծատուրեան:

ՀՈՒՊԸՐԴ ՄԱՐԴԻՆ

Սկաուտական միջազգային Գրասենեակի Տնօրէնն է, որ շատ մօտէն հետաքրքրուած է Հայ սկաուտներով: Իր ներքին Հայաստանի գաղցունները այնքան բուռն են որ ինքզինքը կ'անուանէ Հայ Սկաուտներու Մօրեղբայրը:

ԾԵՐԱՅԱՌ ԳԱՂԵՐԱ

Սկաուտ. անոր լաւագոյն հաճոյքն է զբօսնուլ անտառի և դաշտերու բայցօդեայ մթնոլորտին մէջ՝ քան թէ շնչել քաղաքի ապակեանած օդը: Ան կարող է հիւսիսը, հարաւը, արեւելքն ու արեւմուտքը ցոյց տալ պարզ սկաուտական նշաններու հետեւելով: Առանց մեծ

դժուարութեան այնպէս հաստատուն հանգոյցներ կը շինէ որ շատ կարճ ժամանակամիջոցի մը մէջ կրնայ ետ քակել: Ծառեր կը մագլցի որոնք անկարելի կ'երեւան ուրիշներուն: Կրնայ լաւ լողալ, վրաններ կանգնել, գիտէ վտանգաւոր պտոյտները անմիջապէս հաս-

կընալ, և գիշերները աստղերու օգնութեամբ ճամբայ գրտնել: Կենդանիներու ուղիներ շաններէն կը հասկնայ, միշտ աչքը գետնի վրայ է, պատրաստ և արթուն. իր ուշադրութիւնը կը գրաւեն այնպիսի բաներ երբեմն որ ուրիշներուն բնապիտի շահանուէին: Առանց լուցկիի կընայ կըրակ վառել եւ կըրակուր եփել առանց մեծ դժուարութեան: իր մարմինը աւելի կը պահէ, ոգելից բմպելիներ բնաւ չի գործածեր: Վտանգի պահուն խոհեմութեամբ կը գործէ: Միշտ կ'օգնէ տկարին և բարեկամ է կենդանիներուն: Արկածի մը պահուն անմիջապէս օչնութեան կը հասնի արկածեալն և կը գործադրէ իր սկառասկան բժշկութիւնը, յետոյ եթէ պէտք է, անմիջապէս բժշկին կը վազէ և ոչ թէ անտարբեր կը հեռանայ ալկածին վայրէն: Ան լաւ գիտէ իր քաղաքը և օտարականներուն կուղղեկցի առանց վճարումի: Սկառտը քաջ գիտէ թէ իր ազգը աւելին կ'սպասէ իրմէ քան ուրիշ սէէ մէկ անհատէ, հետեւաբար կ'աշխատի աւելի օշինակելի ապրել: Այս բոլոր յատկութիւնները իւրացնելով հանդերձ, բնաւ չ'արտայայտուիր իր մասին. ան միշտ լուռ և գիտակցութեամբ կ'աշխատի: Կը խօսի կամայ, կը

պատասխանէ քաղաքալարի: Ան շատաստներն ու ազէտ մարդիկը չի ծալրեր, այլ կ'աշխատի զանոնք կըթել իր կեանքի օրինակներով: Գիտէ իր պարտականութիւնները և ի գործ կը դնէ զանոնք առանց հպարտանալու: Միշտ հնազանդ է մեծերուն և ունի իր պատուոյ խօսքը, սրուն համար շահած է բոլորին համակրանքը և վստահութիւնը:

Սկառտական միջազգային եղբայրութիւնը կեդրոններ ունի ամէն տեղ: Երբ երկու տարբեր ազգի պատկանող ըսկառտներ իրար հանդիպին, անմիջապէս սկառտական ժպիտ մը փոխանակելէ ետք, բարեկամանալով իրարու կ'օգնեն, հոգ չէ թէ զիրար չհասկնան, անմիջապէս կը խօսին սկառտական լեզուն, այսինքն սկառտական նշաններով:

Հետեւաբար սկառտը երբ իր տարազը կը հագնի, կ'արժեցնէ անոր հարազատ հանգամանքը, միացնելով արտաքին տեսքին ներքին գործնական մարդը:

Սկառտը լաւ քաղաքացի և ազգասէր է: Լաւ գիտէ իր ազգին պատմութիւնն ու արժանիքները և միշտ պատրաստ է անոր սատարել ինչպէս կը թելադրէ սկառտական նշանաբանը "Միշտ Պատրաստ":

Երուսաղէմ

Հայոց մէջ սկառտական շարժումը տարածողներէն գրեթէ



ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ Ազգային Սկառտապետ

առաջինը եղած է ան Պոլսոյ մէջ, 1918էն շատ առաջ: 1912 ին արդէն իրեն ջանքերով կազմակերպուած էին խումբեր: 1918 Նոյեմբերին Պոլսոյ մէջ իր շուրջ հաւաքելով խումբ մը երիտասարդներ կը հիմնէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, որը մեծ եզեւնի շրջանէն վերջ, Հայոց է՛ն կարեւոր և կենսունակ կազմակերպութիւնը եղաւ: Յակոբեան Հ. Մ. Ը. Մ. ի կազմութիւնէն իվեր կը կրէ Ազգային Սկառտապետի տիտղոսը:

Վ Ա Հ Ա Ն Զ Ե Ր Ա Զ

Հ. Մ. Ը. Մ. ի նահատակուած սկառտներէն. գնդակահարուած Հայ Պոլշե վիկներու կողմէ...:

Այս նշանաւոր Հայ մարզիկը Պոլսոյ Հայ Կղզիի "Տօրք" ակումբի հիմնադիրներէն է:

Ընդհանուր պատերազմի նախօրեակին կը գտնուէր Փարիզ: Թուրքիոյ պատերազմի մասնակցութենէն անմիջապէս վերջ, "Տօրք" ի իր ընկերներէն Սիմոն Պապիկեանի հետ Մարսիլիայէն կը մեկնի Կովկասի ճակատը եւ մինչեւ վերջ համեստօրէն պարզ զինուորի դերին մէջ կուրծք կուտայ թշնամիին: Պատերազմի միջոցին իսկ չէ դադրած մարզական կեանքով զբաղելէ: Երբ կամաւորական Բանակը Վան կը մտնէ Զօր. Անդրանիկի առաջնորդութեամբ, հոն կը հանդիպի Եղիշէ Քաջունիին՝ իր ամենասիրելի բարեկամներէն մին՝ որ փութապէս մը գրկած կուգայ իր մօտ եւ կը սկսին խաղալ:

Երբ Հայաստանի Հանրապետութեան կրթական Նախարարութիւնը Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնէն կը պահանջէ մարզիկներ եւ սկառտապետներ, Վահան առաջիններէն կ'ըլլայ դէպի երկիր մեկնողներէն:

Պաթում հասած միջոցին կը գրէ, "Ներշնչուած առաքեալներու նման բրբօրականա կը մղենք եւ արդէն շուրջերնիս ամէն ինչ կը սկառտանայ": Ալեքսանդրապօլը (Ղինիսական) կ'ընտրէ իր աշխատանքի կեդրոնը. իր ձեռքին տակ կ'ունենայ 500-600 սկառտներ:

"Մենք քիչ ենք, կը գրէ իր մէկ նամակին մէջ, չորս հոգի ենք եւ պիտի

մարզենք Հայաստանը: Բնակարան չունինք, սենեակ չունինք, կը պառկինք հանդիպած տեղը, կամ հիւրանոցի մէջ, կամ վարժարանի մը կեղտոտ տախտակամածին վրայ: Ուտելիք կը ճարուի միայն անհաշիւ ծախսերով: Հաց չես գտներ այստեղ, պէտք է ճաշարան երթալ, պարպել քսակդ, իսկ տուն ունենաս ալ, ի՞նչպէս պատրաստես ուտելիքդ, ոչ փայտ կայ, ոչ ածուխ, ոչ քարիւղ, ոչ կնիկ ունիս, ոչ ալ քոյր, ոչ մամիկ, ոչ ալ ժամանակ:՝ Վերջին աստիճան գէշ դրութեանց մէջ կը տանի այս գործը: Հայաստան երբ Պոլշեփիկներու ձեռքն ինկաւ դեռ Չերազ կը շարունակէր գործը: Երեւանէն մեկնելով նորէն կ'անցնի Ալեքսանդրապոլ եւ պահակութեան պաշտօն մը կ'ստանան Ամերիկեան Օգնութեան կոմիտէն: Ինք կարճ ժամանակամիջոցի մը մէջ Capt. Brownի օգնութեամբ կը կազմէ սկաուտական խումբեր եւ որբերը կ'սկսին մարզուիլ. Վահան կ'անցնէ շատ դժուարին ժամանակ մը, բայց բնաւ չի յուսահատիր:

Օր մը կը մարզէր Քազաչի Բօսթի հարիւրաւոր որբերը, երբ հայ Չեկիստաներէն մին առանց հրամանի կ'ուզէ մարզանք ընող տղոց մէջէն քալել. Չերազ կ'արգիլէ զինք եւ կը թելադրէ որ մարզանքը չխանգարէ, բայց տմարդի Չեկիստը մտիկ չ'ըներ եւ կը շարունակէ իր ճամբան: Չերազի համբերութիւնը հատնելով, ձեռքի մտրակով կը զարնէ անոր:

Այս դէպքէն վերջ, Վահան Չերազ, Հ. Մ. Բ. Մ. ի այս անձնուէր մարզիկը, անգութօրէն կը խողխողուի Պոլշեփիկներու կողմէ, հայ դաւաճան զընդակէն:

Ե Ջ Ն Ի Կ Ք Ա Ջ Ո Ւ Ն Ի

Եռանդուն մարզիկ, նախ զան Հ.Մ.Բ.Մ. ի իր մասնակցութեան կը պատկանէր Պոլսոյ "Տորք" միութեան:

Առաջինը եղաւ Հայաստան մեկնողներէն, իբր զինուոր եւ թէ իբր մարմնակիրթանքի ուսուցիչ որբանոցներու մէջ: Իր ջանքերուն շնորհիւ տարածուեցաւ սկաուտական գաղափարը Հայաստանի մէջ: Նաև կտրողացաւ համոզել Հայաստանի հանրապետութեան կրթական նախարարութիւնը, որ Պոլսոյ Հ.Մ.Բ.Մ.էն մարզիկներ բերուին Հայաստան, մարզելու Հայ սերունդը, այսպիսով արդէն 1920ին իրեն ընկերացան Պոլսոյ Հ.Մ.Բ.Մ.ականներէն, Վահան Չերազ, Օննիկ Երզմանեան եւ Տիգրան Խոյան, և ինք կարգուեցաւ Երեւանի շըրջանին Պատասխանատու Վարիչ:

Գայլիկ մը միշտ հայերէն կը խօսի:
Գայլիկ մը միշտ մտիկ կ'ընէ ծեր գայլը:

Հ. Մ. Բ. Մ. ի կարգապահ սկաուտներէն է ան, որ կարգապահութիւնը ընտրած է իբր նշանաբան:

Պոլսոյ Ետի Գուլէի որբանոցի սկաուտական խումբը բնաւ մոռացութեան



պիտի չտրուի. ան Օննիկին ջանքերով մարզուեցաւ, հպարտօրէն, առողջ, եւ վերստին ծնուելով ցոյց տուաւ թէ "Ապրիլ 24"ը չէր կըրցած ոչնչացնել Հայ ժողովուրդը:

Ինք ըլլալով որբանոցներու Հ. Մ. Բ. Մ. ի սկաուտական յանձնարարութիւն մէջ, Հայկ ճիզմէճեանի եւ Եր. Իսախանութեանի հետ, կարողացան մարզել նոյնիսկ բոլոր տղաքը:

Երբ նորածին Հայաստանի Հանրապետութիւնը կոչ ըրաւ Հ. Մ. Բ. Մ. ի կեդրոնին, Հայաստան զրկելու սկաուտապետ մարզիկներ, Օննիկ առանց կմկմալու փութաց դէպի երկիր: Ինք Երեւանի շրջանի պատասխանատուն էր: Իր մէկ նամակէն կը քաղենք հետեւեալը - "Ես վճռած եմ գործը շարունակել", այս կը գրէ այն ատեն երբ Հայաստան զրեթէ մատնուած էր Պոլշեփիկեան ճիրաններուն:

ՕՆՆԻԿ ԵԱՋՄԱՃԵԱՆ Ի Nääs (Եվլս)

կ'անցնին տարիներ. ան կը վճռէ շարունակել իր մարմնակիրթական ուսումը: 1935 ին զինք կը գտնենք Սթոքհոլմի Մարմնակիրթ. կեդրոնական եւ Արքայական Համալսարանին մէջ:

27 Մայիս 1935ին իր նախաձեռնութեամբ ուխտագնացութիւն մը կը կազմակերպէ դէպի Լինկի դամբարանը. ներկայ կ'ըլլան դիւանագիտական մարմնոյ անդամներ, նախարարներ, պետական բարձր պաշտօնատարներ, տեղական մարզական միութեանց ներկայացուցիչներ եւ զանազան ազգերու մարզական ուսանող ներկայացուցիչներ, ուր կարգ մը նշանաւոր մարզիկ կը խօսին: Օննիկ փակման խօսքը ընելէ առաջ, Հայկական Երազոյնով զարդարուն ծաղկեպսակ մը կը զետեղէ Լինկի շիրիմին վրայ, հետեւեալ մակագրութեամբ. "Ողջոյն եւ յարգանք ԱՐԱՐԱՏ Ի գագաթէն": Այդ առթիւ իր խօսած ճառէն մաս մը. " Հայ ցեղը կ'ապրի իր իւրայատուկ գաղափարով, եւ հակառակ դժնդակ պայմաններուն դեռ կը շնչէ եւ պիտի շնչէ": Օննիկ իր այս շրջանին կը ճանչցուէր Capt. Garkine եւ կը ներկայացնէր Իրանը:

(*) Շենիկ Լինկ Եսկուպի բանաստեղծ (1776-1839): Եսկուպի մարզանքի հիմնադիր:

Հ. Մ. Բ. Մ. ի արթուն պահակներէն մին որ իր գործունէութեան դաշտը ընտրեց հայաստանը, որովհետեւ մարմնակիր թմանքի ուսուցումը հրամայական էր հոն նախգան պատերազմը, Վան անցնելով կը հիմնէ Վասպուրական Ֆուտբոլի խումբը, որը բաւական համբաւ շահած էր Պատերազմի միջոցին տեւականօրէն մասնակցեցաւ Վանի կրիւներուն և ի վերջոյ Ջօր. Անդրանիկի քով քարտուղարի պաշտօնին կոչուեցաւ: Իր կարեւոր աշխատանքը տարաւ, կովկասի մէջ, և զինադպարէն ետք ընկերանալով Ջօր. Անդրանիկին այցելեց Փարիզ, Լօզան և Լոնտոն Մանչէսթրի Հայ Գաղութին կողմէ Երեւան զրկուեցաւ, զալթականներու հանդերձեղէններ բաժնելու պաշտօնով: Հայաստան գտնուած շրջանին շատ օգտակար եղաւ Հ. Մ. Բ. Մ. ի գաղափարին տարածման:

Չերպին նամակէն կը քաղենք հետեւեալը, որը գրուած է Պաթմէն 1. Օգ. 1920ին
"Այս տեղ գտանք Եղիշէն, իր դիրքը շատ բարձր է, և ինձ շատ կարեւոր խոստումներ ըրաւ իր պահեստիէն մեզի սկաուտական հագուստի կտաւ, գուլպայ, ոտնաման և ապագային ալ մարմնակիր թական ամէն հարկաւոր գոյքեր հայթայթելու մասին: Եղիշէն գրտանք լրջացած աղա մը:"

Հ Ա Յ Ա Ր Ի Ն Ե Ր Ո Ի Մ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Հայ Արիներու միութիւնը կը կազմուի 1927ին Փարիզի մէջ՝ գլխաւորութեամբ Տօքթ. Գ. Մեծատուրեանի: Այս խումբին կը միանան Փարիզի Հ. Մ. Բ. Մ. ի սկաուտներէն մաս մը, սրունք բաժնը-



ՏՕԹԹ. ԳՈՒՐԳԷՆ ՄԵՍԱՏՈՒՐԵԱՆ

ուելը: Հ. Մ. Բ. Մ. էն կը միանան այս նորակազմ միութեան: Տօքթ. Գ. Մեծատուրեանի տարած աշխատանքին շնորհիւ, 1928 ին, Հայ Արիներու միութիւնը պաշտօնապէս կը վաւերացուի Սկաուտական Միջազգային կոմիտէի կողմէ, բոլոր միւս ազգերուն կողքին հաւասար իրաւունքներով, և ինք կը ճանչցուի ամբողջ աշխարհի Հայ սկաուտներու ընդհանուր Պետք, անշուշտ յաչս օտարներուն:

Այս միութիւնը կ'սկսի շուտով ճիւղաւորուիլ և մասնաճիւղեր կազմել Ֆրանսայի այլևայլ շրջաններուն:

մէջ: Նմանապէս 1932 ին Գահիրէի Հայ Արիներու ընկերակցու-

թեան և 1933 ին Ալեքսանդրիոյ "Կամք" մարմնակիր թական միութեան միացումով կը ստեղծուի երկրորդ շրջանն ալ:

Հոս անաչարօրէն արձանագրենք, որ այս շարժման զեկավարը Տօքթ. Մեծատուրեան, ունենալով սկաուտական բաւական բարձր աստիճան մը, որպէս քաջալերանք և գնահատանք իր տարած լաւ աշխատանքին, Սկաուտական շարժման պետ, Պէյտըն Փաուըլէն իրեն կը շնորհուի Camp Chief ի աստիճանը, որով իրաւունք կ'ունենայ վկայեալ խմբապետներ պատրաստելու:

Հայ Արիներու միութիւնը, Սկաուտական միջազգ. պատգամաւորական ժողովին կը մասնակցի վճռական վեց ձայնի իրաւունքով, նմանապէս իր մասնակցութիւնը բերաւ միջազգ. ճամբարներուն, որպէս Ալմենիա Եւ մենք հոս հպարտութեամբ կ'արձանագրենք որ սփիւմը Հայ արիներ, Հայկական տարազներով, պարերով, երգերով և այլն պանծացուցին Հայ Ազգը յաչս հանուր աշխարհին:

Ա Կ Ն Ա Ր Կ Մ Ը

Հ Ա Յ Ա Ր Ի Ն Ս Ա Կ Ա Ն Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ե Ա Ն

Ժ. Ուլսըն, Կիւուէլի ընդհ. Տնօրէն, 1935ին սկաուտական միջգրասենեակի կողմէ զրկուեցաւ Հնդկաստան, այցելելու Հնդիկ սկաուտներուն: Վերադարձին իր Երուսաղէմ այցելութեան սկաուտական հաւաքոյթի մը առթիւ, ուր գանազան ազգութիւններու սկաուտական շարժման մասին կը խօսուէր, ի միջի այլոց ան ըսած է. "Ուրախ եմ յայտարարելու որ սկաուտական առաջին խումբերէն մին ալ եղած է Հայկական խումբ մը կալկաթայի մէջ: Այս ազգը իրապէս ունի սկաուտներ:"

Այո, ունինք և ունեցան ենք սկաուտներ: Դեռ 1680 թուականներէն սկսելով մինչև 19րդ դարու սկիզբները, յաջորդաբար վաւերացուած է Էջմիածնայ Երիզաւար, Աղեքսանդր և Արզուրեանց կաթողիկոսներէն: Մուտափոյ մէջ պատասեկան միութիւն մը գոյութիւն ունէր, որուն անդամները կը կոչուէին "Կտրիճ": Այս միութեան նպատակն էր, եկեղեցին պաշտպանել, համայնքին ունէ անհատին պսակի, յուրարկաւորութեան և թաղման արարողութեանց ներկայ գտնուիլ,

ըլլալ կարգապահ և հնազանդ: Նաև ուրիշ օրէնքներ՝ սկսուտականին յարեւմտան: Ուրեմն, Հայոց մէջ, սկսուտական շարժումը կը սկսի 17րդ դարէն:

1920ին Պոլսոյ մէջ՝ կը կազմուի սկսուտութիւնը, որը շուտով կը ճիւղաւորուի, թէպէտ շատեր չուզեցին հասկնալ անոր տալիք օգտակարութիւնը Հայ նորահաս սերունդին, այսու ամենայնիւ շուտով եկաւ կորիզը կազմել մարմնակրթական միութիւններու աշխատանքին:

Ընդհ. պատերազմէն անմիջապէս վերջ Հ. Մ. Բ. Մ. ի կազմութեամբ, սկսուտական կեանքն ալ Պոլսոյ մէջ իր կանոնաւոր հունին մէջ մտաւ, և յաջորդաբար խումբեր կազմուեցան Կիլիկիոյ այլև այլ քաղաքներուն մէջ:

Այս թուականներուն, մանուկ Հայաստանի կրթական նախարարութիւնը անմիջական պէտքը զգալով Հայ ժողովուրդին տա

ռապած բեկորներուն ֆիզիքականը մարզելու, կը խնդրէ Հ. Մ. Բ. Մ. ի կեդրոնէն, Պոլիս, որպէսզի մարզիկ-սկսուտներ ուղարկուին Հայաստան: Հ. Մ. Բ. Մ. ի կեդրոնը, ընդառաջելով այս խնդրանքին, կը զրկէ իր լաւագոյն մարզիկները զէպի երկիր ծառայելու համար Հայ ժողովուրդին:

Ներկայիս, Հ. Մ. Բ. Մ. ք մասնաճիւղեր ունի գրեթէ բոլոր գաղութներուն մէջ, իր կողքին ունենալով սկսուտական խումբեր, բացի Ամբրիկայի Հ. Մ. Բ. Մ. քն:

Յաջորդ էջերու մէջ կուտանք Հ. Մ. Բ. Մ. ի մասնաճիւղերուն, սկսուտական գործունէութեանց շատ ամփոփ պատկերները: Թե. բեւ ահամայ կարգ մը սխալներ և պակասներ գտնուին, քանզի հազիւ այսչափ կարելի եղաւ տեղեկութիւններ հաւաքել: Կը յուսանք որ մասնաճիւղերը ներդրամիտ պիտի ըլլան:

ուտական շարժումը կը ղեկավարուի սկսուտական խորհուրդի կողմը որուն կազմն է հետեւեալը:

Վազգէն Անդրէասեան, Երջանային Պետ եւ Նախագահ. —

Սերոբ Սերոբեան, Երջանային Օգնական պետ:

Օր. Անահիտ Սերճանեան }
Հայկ Մերկերեան } անդամ
Աշոտ Սերճանեան }

ՖՐԱՆՍԱ

Հ. Մ. Բ. Մ. ի Ֆրանսայի շրջանը ունի բազմաթիւ սկսուտական խումբեր, որոնք կը կատարեն իրենց կանոնաւոր ժողովներն ու բանակումները: Անցեալին՝ սկսուտական վերին մարմինը ծրագրած էր կազմակերպել "Հ. Մ. Բ. Մ. ի ընդհ. սկսուտական ճամբար" մը, որ զժբախտաբար ցարգ չէ իրականացած: Ներկայիս սկա

Փարիզ և արուարձանները ունին 160, Վիէն (Լիօնի մօտ) աւելի քան 30 և Մարսէյլ 80 սկսուտներ և գայլիկներ: Նիս, Թուրոն եւ Տէսէնի մօտ 30ական սկսուտներ: Տէսէնի շրջանը խմբապետի չգոյութեան պատճառաւ դատապարտուած է անգործութեան:

Անցեալին սկսուտական խորհուրդը կազմակերպած է բանակումներէ և արշաւանքներէ գատ, ընդհանուր համագումարներ և

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Մասնաճիւղէս հիմնուելէն տարի մը յետոյ կազմուեցաւ սկսուտական խումբը: Եղբայր Կարօ Մարտիրոսեանի ջանքերուն շնորհիւ, 21 հոգիէ բաղկացած խումբը լծուեցաւ գործի, կանոնաւոր դասախօսութիւններով և վարժութիւններով:

Կարճ ժամանակի մը ընթացքին՝ արդէն պատրաստուած, խումբը կատարեց պաշտօնապէս իր երդման արարողութիւնը: 1937 Մայիս 2ին, խումբն բազմութեան մը ներկայութեան հանդէպին նախագահեց Հայր Յուսիկ Վրդ. Աւետիսեան: Սկսուտները ծնկաչոր ստացան Հայր Սուրբին օրհնութիւնը: Խումբը վաւերացուելով կառավարութեան կողմէ, եղաւ Երուսաղէմի՝ 30րդ, իսկ Պաղեստի

սկսուտական վարժարան մը, ուր պատրաստուած են խմբապետներ:

* * *

Եղբայր Վազգէն Անդրէասեան, Ֆրանսայի (Երջանային Պետ), լրացնելու վրայ է "Սկսուտական Գիտելիքներ", վերնագրով գիրք մը: Այս հոյակապ հատորը նուիրուած պիտի ըլլայ ողբացեալ Վահան Չերազի անմոռանալի յիշատակին:

նի՝ 52րդ սկսուտական խումբը: Ներկայիս կան 3 խմբակներ Աուիժ, Արծիւ, Վազր, որոնց առաջնորդներն են Եղբ. Յ. Մահսերէճեան, Ս. Սէմէրճեան և Ա. Լուսարարեան: Ընդհ. խմբապետն է Եղբ. Կ. Մարտիրոսեան, փոխանորդ՝ Եղբ. Լ. Երկաթեան:

Շարաթը հեղ մը կանոնաւորապէս կատարուին խմբական ժողովներ և դասախօսութիւններ: Ներկայիս կան 8 հոգի բ. կարգի սկսուտներ, որոնք մօտերս պիտի անցնեն Ա. կարգի քննութիւնները:


Կատարուեցան 4 արշաւներ որոնք յաջող էին և հաճելի: Կարելի է ըսել որ ներկայիս Պաղեստինի մէջ ամէնէն կենդանի սկսուտութիւնը կը համարուի մերինը:

ՊԵՅՐՈՒԹ

Պէյրութի սկաուտական խումբը կազմուած է 1926ին: Այս տասներկու տարուայ շրջանին ունեցած է մըջին հաշուով 60 ըսկաուտներ և բոլորած բաւական

փայլուն շրջան մը, կազմակերպելով բանակումներ և պտոյտներ: Միշտ ներկայ գտնուած է ազգային տօնակատարութեանց, անոնց կարգապահութեան հսկողութիւնը ստանձնելով:

Ներկայիս սկաուտներու թիւը



Պէյրութի սկաուտներէն երկու խմբակ Աննիլիաս բանակումի ընկացքին մարզանքին յետոյ լոգնալու պատրաստ վիճակով, 1938

բարձրացած է 85ի՝ զայլիկներով միասին: Պէյրութի մասնաճիւղը ունի սկաուտական երկու խումբեր, մին՝ պէյրութ միւսը՝ Էշրէֆիէ:

Սկաուտական գործերը կը վարէ յատուկ յանձնախումբ մը, ուղղակի տեղական վարչութեան հսկողութեան տակ: Յանձնախումբին անդամներն են, Եղբարք Մ. Տէօվլէթեան՝ Ատենապետ, Վահրամ Ս. Փափազեան՝ ֆարտուղար, նաև տեղական վարչութեան ներկայացուցիչ, Յովհ. Ժամկոչեան՝

Գոյքապահ, Զաւէն Փէհլիվանեան՝ Իշրէֆիէի Լիազօր և Լեւոն Աբգարեան՝ Ընդհ. խմբապետ:

Պէյրութ ունի երեք սկաուտական խմակներ, Առիւծ, Արծիւ և Շուն, 27 սկաուտներով, խմբապետ Յովհ. Ժամկոչեան, չորս վեցեակ Գայլիկներ, Նապաստակ, Սիրամարգ, Ա.Բ.Լուր և Բու, 28 զայլիկներով, Ա.Բէլա՝ Վարդգէս Պէրպէրեան: Էշրէֆիէն ունի երեք խմբակներ, 21 հոգի, և մէկ վեցեակ զայլիկ՝ 9 հոգի, որոնց խումբ

բապետութիւնը կը վարէ Եղբ. Զաւէն Փէհլիվանեան: Վերոյիշեալ երկու խումբերուն ընդհ. ըսկաուտապետն է, Հ. Մ. Բ. Մ. Ի յայտնի սկաուտներէն Եղբ. Լեւոն Աբգարեան:

Պէյրութի մէջ սկաուտական մեծ գործ կայ կատարուելիք: Նոր Ակումբին բացումը զիւրացուց փոքրիկներու հաւաքումը, սակայն դաստիարակչական ոյժերու պակասը՝ ինչպէս ամէն տեղ, հոս ևս զգալի է:

Այժմ մեծ աշխատանք կը տարուի նոր ոյժեր պատրաստելու, աւելի զանգուածօրէն մարզելու համար պատանի սերունդը, ներմուծելով անոր կարգապահ օգին, որը կենսական է Արմէն ցեղի տեւականացման համար:

ՀԱԼԷՊ

1925 ին Եղբ. Լուտեր Մաս. պանաճեանի, Միհրան Կարապետեանի, Լեւոն Աբգարեանի, Սահակ Խաչատուրեանի, Տիգրան Աղճեանի, Լեւոն Մուրատեանի և Լեւոն Պապիկեանի ժրջան ջանքերով հիմը դրուեցաւ Հ. Մ. Բ. Մ. Ի:

Կարճ ժամանակի մէջ Հալէպահայութեան ջերմ գուրգուրանքին արժանացաւ, պարունակելով իր մէջ հարիւրաւոր երիտասարդ-

ներ և պատանիներ որոնք այսօր հպարտ են իրենց վրայ բարձրացուած տեսնելով Հ. Մ. Բ. Մ. Ի վեհ դրօշակը:

Տնտեսական ու բարոյական լարիւրինդոս դարձած գաղթական Հալէպահայութեան մէջ, Հ. Մ. Բ. Մ. Բ. շուտով դարձաւ ամօքիչը անոնց ֆիզիքական և բարոյական վերելքին: Այսօր իրենց առջին պատրաստ ունին 400 սկաուտներ, (200 սկաուտաներ, 40 երէցներ, 140 զայլիկներ և 20 արինուշներ) կը թուած զինուորական կարգապահութեամբ՝ որոնք պարձանքն են Հայութեան և արգասիքը Հ.Մ.Բ.Մ. Ի անխոնջ աշխատանքին, և՛ որոնք իրենց հըսկայ տողանցներով ժամեր կ'ապրեցնեն Հայ ժողովուրդը, գոգցես Մայր Հայրենիքին մէջ:

Տեղի ունեցած են սկաուտական 9 մեծ բանակումներ, ուր յայտնաբերուած է սկաուտներու տոկունութիւնն ու ուշիմութիւնը:

Սկաուտական այս հսկայ աշխատանքը կը պարտինք, Եղբ. Լեւոն Աբգարեանին, որը պատրաստեց այնպիսի ատաղճներ որոնք կարող են այսօր իրենց կարգին աւելի մեծ թիւով պատանիներ կը թել:

Ներկայիս Հալէպի կազմին ըս-

կառուտապետն է Եղբ. Լեւոն Պապ-
լուզեան:

Յիշատակութեան արժանի է նաև Տիկ. Լ. Աբգարեանը, որ առաջին անգամ ըլլալով Սիւրիոյ և Լիբանանի մէջ, 1933ին կազմեց արեւուշներու խումբ մը, 20 հոգիէ բաղկացած:

Հալէպի Սկառտական այս մեծ խումբը կը ղեկավարուի սկառտական Խորհուրդի մը կողմէ ուրուն հակակշռին տակն է Հ. Մ. Ը. Մ. ի Սիւրիոյ - Լիբանանի և Պաղեստինի շրջանի սկառտական ճոխ միջերանոցը:

ԴԱՄԱՍԿՈՍ

Հ. Բ. Մ. Մ. ի Դամասկոսի մասնաճիւղը երկար տարիներ ըստ շաշխատանք տարած է նորահաս սերունդը մարմնակրթանքի և սկառտիզմի վարժեցնելու համար, արդիւնքը ծանօթ է բոլորին: Սկառտական առաջին խումբը կազմուած է 1925ին:

Անցեալին մէջ միշտ ունեցած է արշաւներ և բարեկամական կապեր հաստատած Արաբական խումբերու հետ: Միշտ ստանձնած է ազգային տօնակատարութեանց՝ նաև ֆութպոլի մեծ մրցումներուն

առթիւ կարգապահութեան հսկողութիւնը:

Անցեալի գործունէութիւնը շրջան մը կազմ է կարող խմբապետի մը չգոյութեան պատճառով: Բայց ներկայիս սկառտական խումբը կանոնաւորապէս իր ուղին գծած ըլլալով, մաս կը կազմէ Արաբական սկառտական ֆէտերասիոնին: Այժմ խումբը ունի գործունեայ խմբապետ մը և վարիչներ, ինչպէս նաև սկառտական Խորհուրդ մը: Սկառտապետն է Եղբ. Տիգրան Ոսկերիչեան, իր տրամադրութեան տակ ունի 50 սկառտներ, բաժնուած Արծիւ, Բագէ և Առիւծ խմբակներու: Սկառտական խումբը ունի իր կողքին 25 հոգիանոց գայլիկներու խումբ մը:

ԼԱԹԱՔԻՍ

Հ. Մ. Ը. Մ. ի Լաթաքիոյ մասնաճիւղի սկառտական խումբը կազմուած է 1933ին 15 անդամներով, խմբապետութեամբ Եղբ. Միսաք Ալապօզանլեանի:

Այս թիւը կարճ ժամանակի մը մէջ բարձրացած է 50ի: Սակայն դժբախտաբար, տիրող տնտեսական վատ կացութեան և ստեղծուած քաղաքական պայմաննե-

րու պատճառաւ, բազմաթիւ ընտանիքներու մեկնումով, սկառտներուն թիւը հետզհետէ նուազած է: Ներկայիս ունինք 28 սկառտներ, բաժնուած չորս խումբերու: Աղուէս, Գայլ, Առիւծ, և Արծիւ Փոխ խմբապետն է Եղբ. Հայկազ Մասումեան: Աւնեցած է հերթական դասախօսութիւններ, շուէտական մարզանքներ: Կատարած է Սկառտական բանակումներ և արշաւներ: Իր լայն մասնակցութիւնը բերած է միշտ Ազգային բոլոր հանդէսներու և զանազան ձեռնարկներու:

Կը վայելէ ժողովուրդի մեծամասնութեան անվերապահ համակրանքը և աջակցութիւնը: Նոյն իսկ օտար շրջանակներու մէջ, բազմաթիւ քաղաքիս մէջ ուրիշ սկառտական խումբերու, մեր կազմը ճանչցուած է իբր ամենէն կարգապահն ու ներկայանալին և իբր այդպիսին ալ միշտ զնահատուած:

ԳԸՐԸԳ ԽԱՆ. — Համեմատելով Սիւրիոյ միւս բաղադրներուն հայրենեան միւլին հետ, Գըրըգ Խան ունի լաւ կազմակերպուած բուհատական խումբեր, 60 հոգիէ բաղկացած:

- ՃԱՐԱՊՈՒԼՈՒՍ — 30 սկառտներ:
- ԳԱՄԻԵԼԻ. — 25 սկառտներ:
- ԱԶԷԶ. — 30 սկառտներ:
- ԶԱՆԼԷ. — միկ խմբակ:

ԳԱՀԻՐԷ


Մասնաճիւղը կը գտնուի Հէլիոպոլսոյ մէջ: Շրջան մը կ'ունենայ սկառտական և գայլիկներու խմբակներ, բայց ներկայիս իր ուժը աւելի կեդրոնացուցած ըլլալով մարզական գետնի վրայ, սկառտական շարժումը զաղրած է:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ

Հ. Մ. Ը. Մ. ի Աղեքսանդրիոյ մասնաճիւղին սկառտական շարժման սկիզբը կը գրուի 1932-33ին, գայլիկներու պատրաստութեամբ, որոնց խմբապետութիւնը կը յանձնուի եղբայր Յովհաննէս Չորլեանի: Վերջին երեք տարիներու ընթացքին այս շարժման աւելի աշխատանք տանելով, գայլիկները կը դառնան սկառտներ, որոնք ներկայիս խումբին կորիզը կը կազմեն, թիւով 14 հոգի: Վերջին տարուայ ընթացքին նոր գայլիկներու յաւելումով՝ սկառտական խումբին թիւը կը հասնի 30ի, որուն առաջնորդութիւնը կը վարէ շարունակաբար եղբայր Յովհաննէս Չորլեան և որպէս փոխ-խմբապետ՝ եղբայր Զարեհ Դերձակեան:

Մէկ տարիէ ի վեր պաշտօնապէս կապուած է Եգիպտական սկաուտական կեդրոնին և պաշտօնական ինքնութեան թուղթեր առնուած: Այս տարի Յունիս 19ին խումբին սկաուտական զրօշակը օրհնուեցաւ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցիին մէջ Տ. Մամբրէ Սըր-

բագան Սիրունեանի կողմէ: Այս տարի ութը սկաուտներ, առաջնորդութեամբ իրենց խմբապետին և փոխ-խմբապետին, Յունաստան մեկնեցան, իրենց հետ տանելով անհրաժեշտ վրանները և բանակումի պիտոյքները:



Սկաուտներ և մարզիկներ երգման արարողութեան առթիւ
 Շ. Մ. Ը. Մ. ի Աթենահայ ոլիմպիականին 1938

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ. ք հիմնուած է 1924 ին. 10 տարիներու ընթացքին վերելքներու և անկումներու շրջան մը բոլորելէ վերջ, այսօր կը ներկայանայ ընդհանուր վերակազմութեան աշխատանքով մը որ սկսած է երկու տարիէ ի վեր, և կը շարունակուի յամառօրէն, Հ. Մ. Ը. Մ. ք զարծնելու կուռ կազմակերպութիւն մը, հասցնելու համար

զայն իր նախկին փառքին: Ներկայիս մասնաճիւղեր ունի հետեւեալ քաղաքներուն մէջ.—

- Աթենք, երկու մասնաճիւղ,
 1. Ֆիքս
 2. Սինկրու
- Բէրլի, երկու մասնաճիւղ,
 1. Լեբազմա
 2. Գոզինեա

Յետոյ կարգով կուգան, Թե. սաղոնիկէ, Գաւալա, Աղեքսանդրուպոլիս, Ռէթիմնա, Լաոփաս:

Վերոյիշեալ մասնաճիւղերէն, սկաուտական խումբեր ունին հետեւեալները.— Ֆիքս, Սինկրու, Գոզինեա, Թե. սաղոնիկէ: Գաւալայի մասնաճիւղը ունեցած է իր սկաուտական խումբը մինչև 1935: Այժմ տանք զանազան խումբերու պատկերը իրենց կազմութեան թուականով.—

ՍԻՆԿՐՈՒԻ Գ. ԽՈՒՄԲ. — կազմուած 1924ին ղեկավարութեամբ սկաուտ աստիճանաւոր Եղբ. Արամ Գասապեանի: Սկզբնաւորութեան ունեցած է 25-30 անդամներ, 1925ին մասնակցած է Յունաստանի սկաուտական ընդհ. ճամբարին: 1929 ին տնտեսական տազնապի, արտագաղթի և ներգաղթի պատճառաւ խումբը կրեց զօրաւոր ցնցում մը, որու հետեւանքով ստացաւ անկազմակերպ վիճակ մը, որը տեւեց շուրջ 5 տարի: 1934ին վերակազմուեցաւ 25 անդամներով, զարծեալ խմբապետութեամբ Եղբ. Արամ Գասապեանի: Սինչեւ այսօր կանոնաւորապէս կը շարունակէ գործել, ունենալով սկաուտական դասախօսութիւններ, բանակումներ և արշաւներ: Իր մասնակցութիւնը կը բերէ ազգային հանդէսներու:


ՖԻՔՍԻ Ա. ԽՈՒՄԲ. — կազմուած 1935ին խմբապետութեամբ Եղբ. Լեւոն Գալեանի որ կը շարունակէ ցայսօր: Ներկայիս ունի 45 սկաուտներ. խմբապետական կազմը կը բաղկանայ հետեւեալներէ.— Եղբ. Լ. Գալեան՝ խմբապետ, Մանուկ Գրիգորեան՝ փոխ խմբապետ, վարիչ առաջնորդ՝ Երուանդ Աբոսթոլեան: Ունեցած են և կ'ունենան կանոնաւոր դասախօսութիւններ, արշաւներ և բանակումներ:

Անցեալ տարի հանդիսաւոր կերպով տեղի ունեցաւ նորընծաներու երդման արարողութիւնը, որուն ներկայ էին ազգային իշխանութիւնները և Յունական սկաուտական կեդրոնին վարիչները: Հ.Մ.Ը.Մ. ի առաջին խումբըն ալ պաշտօնապէս ճանչցուած է Յունական սի. կեդրոնին կողմէ (23րդ խումբ): Մասնակցած է հելլէն տօնակատարութեանց և մեր ազգային բոլոր հանդէսներուն: Այս տարի մասնաւոր զընահատանքի վկայականի արժանացաւ Յունական կեդրոնին կողմէ անտափ մէջ ծագած հրդեհ մը մարած ըլլալուն համար:

ՖԻՔՍԻ Բ. ԽՈՒՄԲ. — Այս խումբը կազմուեցաւ 1934ին Գեր. Հայր

Յովհ. Ծ. Վրդ. Կամսարականի
 ջանքերով, մեծ մասամբ Ս. Գրի-
 գոր Լուսավորիչ վարժարանի ա-
 շակերտութենէն: Նախապէս կը
 գործէր իբր անջատ խումբ (Յու-
 նական 26րդ) խմբապետութեամբ
 Եղբ. Եղիա Թոմպուլեանի: Վար-

ժարանի տնօրէնութիւնը և խում-
 բին խնամակալութիւնը ընդառա-
 ջելով Հ. Մ. Ը. Մ. ի շրջանային
 վարչութեան ղեկավարին, 1937 ին
 խումբը միացաւ Հ. Մ. Ը. Մ. ի,
 որու զրօշին տակ կը գործէ մին-
 չեւ այսօր Ըլլայ անցեալի մէջ



Սկառտական ցոյցեր, Հ. Մ. Ը. Մ. ի Աթենսիայ ոլիմպիականին 1938

թէ ներկայիս, խումբը ունեցած է
 բեղուն գործունէութիւն, և դաս-
 տիարակչական մակարդակը եղած
 է բարձր: Սկսած է 16 սկառտ-
 ներով որոնց թիւը ներկայիս բար-
 ձրացած է 38ի, որոնց մէջ կը
 հաշուուի 1 փոխ խմբապետ, 3
 առաջնորդներ, 4 փոխ առաջ-
 նորդներ, 10 բ. կարգի,
 9 գ. կարգի, 4 թէկնածու
 սկառտներ և 6 գայլիկներ: 5

տարուայ ընթացքին կատարած
 է 49 արշաւներ, մէկ բանակում
 Մասնակցած է սկառտական տո-
 ղանցըներու և ազգային զանա-
 զան տօներու: Մասնաւոր զնահա-
 տանքի արժանացած է երկրա-
 գործական նախարարութեան կող-
 մէ վուլգարմեծքի և Գորիտալաոսի
 անտառներուն մէջ ծագած հրդեհը
 մարելուն համար:

ԳՈՂԻՆԻՈՅ Դ. ԽՈՒՄԻ. — Անց-
 եալին մէջ Գողինեա ունեցած
 է կանոնաւոր սկառտական խումբ
 մը ինչպէս նաև զօրաւոր մաս-
 նաճիւղ մը: Սակայն այդ թաղին
 մէջ մղուած սուր պայքարները
 փոխադրուեցան Հ.Մ.Ը.Մ.է ներս,
 յառաջ բերելով պառակտում
 և քայքայում: Շրջանային Վար-
 չութեան ջանքերով ամուր հիմն-
 րու վրայ այս տարի վերակազ-
 մուեցաւ մասնաճիւղը արձանա-
 զըրելով յարաճուն վերելք: Անոր
 կողքին ստեղծուեցաւ սկառտա-
 կան խումբ մը բաղկացեալ 35
 նորեկներէ, որոնք խմբապետ Եղբ.
 Ետ. Սափրիչեանի յարատեւ աշ-
 խատանքով սկսած են դաստիա-
 րակուիլ և այժմ կը սպասեն
 նախնական քննութիւններու և
 զգեստաւորման:


ԹԵՍԱՂՈՆԻԿԷ . — 1922 ին
 և 1924 ի երկու ձախող փոր-
 ձերէն յետոյ, սկառտական խում-
 բը վերջնականապէս կազմուեցաւ
 1930 ին և Յունական կեդրոնէն
 ճանչցուեցաւ Առաջին խմբապե-
 տը եղաւ Եղբ. Հրանդ Պարոնեան:
 Անոր Հայաստան մեկնումէն յե-
 տոյ, խմբապետութիւնը ստանձ-
 նեց Եղբ. Արշավիր Ճամճեան և
 պաշտօնապէս ճանչցուեցաւ Յու-

նական սկառտական կեդրոնին
 կողմէ: Սկառտական խումբը շու-
 տով ժողովրդականութիւն շահե-
 ցաւ, և մնայուն վերելք ունեցաւ:

Այսօր կը հաշուէ 70 սկառտ-
 ներ, 4 առաջնորդներ, փոխ-խմ-
 բապետ և խմբապետ մը. բաժ-
 նուած են 8 խմբակներու: Գա-
 սաւանդութիւնները և ժողովները
 շատ կանոնաւոր կ'ընթանան: Ի-
 րենց մասնակցութիւնը կը բերեն
 ազգային բոլոր ձեռնարկներուն
 Յունական սկառտական կեդրոնէն
 միշտ զնահատանքի արժանացած
 է: Մասնաւոր անցեալ տարուայ
 բանակումի ընթացքին մեր սկա-
 տներուն լրջութիւնը և կարգա-
 պահութիւնը հիացումի առարկայ
 եղած է թեսաղոնիկէի սկառտա-
 կան քննիչին կողմէ: Այժմ ձեռ-
 նարկներ կ'ընեն քաղաքին հայա-
 շատ մէկ ծայրամասին մէջ ալ նոր
 խումբ մը յառաջացնելու, որով
 Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ին զօրաւո-
 բագոյնը կը հանդիսանայ:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ. — Ինչ-
 պէս սկզբնաւորութեան յիշուած
 է, Հ. Մ. Ը. Մ. ի ընդհանուր հի-
 ւանդագին վիճակը ազգած էր
 նաև սկառտական գործերու վրայ:
 Խումբեր գոյութիւն ունէին որոնք
 կը գործէին իրարմէ անջատ, ա-

ուանց փոխադարձ հասկացողութեան և ընդհանուր ղեկավարութեան: Անցեալ տարեշրջանին, Շրջանային Վարչութիւնը չափազանց կլանուած ըլլալով ընդ-



ՀԱՅԿ ՏԵՏԵԱՆ

Յունաստանի Հ. Մ. Ը. Մ. ի սկառտապետ հանուր վերականգնումի աշխատանքներով, չի կարողացաւ մասնաւոր ուշադրութեամբ զբաղիլ այս հարցով: Կերկայ տարեշրջանին սակայն առաջին գործը եղաւ ներդաշնակել սկառտական խումբերու գործունէութիւնը, յառաջացնելով սկառտական վերին մարմին մը, բազկացեալ զանազան խումբերու խմբապետներէն և շրջանային վարչութեան ներկայացուցիչէն: Այժմ յիշեալ մարմինը սկսած է աշխատանքի, պատրաստելով դաստիարակչական և կազմակերպական գործունէութեան ծրագիր մը: Սկսած է առաջնորդական դասախօսու-

թիւններու, Աթէնքի և Բէրլայի խումբերուն մէջ: Կազմը հետեւեալն է:

Եղբ. Հայկ Տէտէեան — Ատենապետ և Սկառտական պետ:

Եղբ. Գ. Գանիէլեան՝ ներկայացուցիչ Շրջ. Վարչութեան:

Եղբ. Կարօ Գասապեան՝ Ատենապալիր:

Եղբ. Եղ. Սափրէչեան, Լ. Գապեան, Եղիա Թոմպուլեան Խորհրդակալաններ:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Հ. Մ. Ը. Մ. ի Պուլկարիոյ շրջանը ունի ինը մասնաճիւղեր և շրջանային վարչութիւն մը, որը կը գտնուի Վառնայի մէջ, նախագահութեամբ Եղբ.Տօքթ. Պերճ Հաճոլեանի:

Սկառտութիւնը, ըլլալով Հ. Մ. Ը. Մ. ի մէկ անբաժան մասնիկը, գրեթէ իւրաքանչիւր մասնաճիւղ ունի սկառտներ, գայլիկներ, արեւուշներ (Girl guide) պարիկներ (Brownie) և երէց սկառտներ: Սկառտական խորհուրդին հրահրութեան տակ այս շարժումը լաւապէս յառաջ կը տարուի, որուն կեդրոնը կը գտնուի Փլովտիլ, նախագահութեամբ

Ելբ. Ներսէս Ասուածատուրեանի:

Երկու տարին անգամ մը, Հ. Մ. Ը. Մ. ը կը կազմակերպէ սկառտական ընդհանուր բանակում մը, որուն կը մասնակցին անխտիր բոլոր մասնաճիւղերը:

ՊՈՒՐԿԱԶ. — Մասնաճիւղին և սկառտական շարժման հիմը կը դրուի 1924ին: Ունի աւելի քան 90 սկառտական կազմ, որուն խմբապետութիւնը կը վարէ Եղբ. Գր. Խ. Չիլիկիլիւրեան:

ԹԱԹԱՐ ՊԱԶԱՐՃՐԳԻ Մասնաճիւղը կը հիմնուի 1924 ին. նոյն թուականներուն սկիզբը կը դրուի նաև սկառտական շարժման ներկայիս ունի բաւական լաւ կազմակերպուած սկառտներու և գայլիկներու խումբ մը:

ՌՈՒՍՃՐԳԻ Մասնաճիւղը ունի երէց և փորձառու սկառտապետ մը յանձին Եղբ. Վաղարշակ Ասատուրեանի, որը ի բոլոր սրտէ նուիրուած սկառտական գալափարին, յառաջ տարած է շարժումը իր շրջանին մէջ, պատրաստելով տասնեակ մը սկառտներ:

1925-6ի շրջանի, այս մասնաճիւղը հրատարակած է "Հայ Սկառտ" անունով թերթ մը:

ՎԱՌՆԱՅ. — Հոս կը գտնուի Շրջ. Վարչութիւնը: Սկառտական խումբը ունի կարող սկառտներ, որոնք գիտակցօրէն յառաջ կը տանին այս նուիրական գործը, որը Արմէն ցեղի դիմադրողական ոյժին լաւագոյններէն է գարուս ամէհի յորձանքներուն դէմ: Հայ ցեղի մասին դասախօսութիւններ միշտ տեղի կ'ունենան: Ունի մերձ 30 սկառտներ, 15 գայլիկներ և 25 արեւուշներ:

ԸՆԴՀ. սկառտապետն է Եղբ. Եղուարդ Հաճրիկեան. առաջնորդ՝ Եղբ. Վահրամ Դերունեան:

ՓԼՈՎՏԻՎ. — Հոս սկառտական շարժումը կը սկսի նախ 32 ըսկառտներով, ապա մէկ սարուայ անխոնջ աշխատանքին շնորհիւ թիւը կը բարձրանայ 48ի, որոնց կողքին շուտով կը կազմուի գայլիկներու և արեւուշներու խմբակներ: Մասնաճիւղը հրատարակած է "Պահակ" սկառտական խմորատիպ թերթ մը, և միքանի ուրիշ թերթեր,

ինչպէս "Հ. Մ. Ը. Մ.", "Հ. Մ. Ը. Մ. Ի Տեղեկատու", "Մարզիկ" և այլն: Սկառուտակտն է Ելբ. Թորգոմ Գալփագճեան:

Սոփիոյ, Շումէնի և Հասքովայի մասնաճիւղերն ալ ունին իրենց սկառուտական խումբերը:


Ալիվէն. Այս մասնաճիւղին աւելի լայն տեղ կուտանք, սիրայօժար փութացած ըլլալով ընդառաջել մեր խնդրանքին:

Սլիվէնի սկառուտական խումբը զօրաւոր մէկ ջիղն է Հ. Մ. Ը. Մ. Ի մասնաճիւղին, որը հիմնուած է 1925ին, 30 սկառուներով, բաժնուած երեք խումբակներու: 1927ին վարիչներու քննարկէս հեռանալուն պատճառաւ, խումբը կը կազմալուծուի, բայց բարեբախտաբար, վերակազմուելով 1929 թուականին, մինչև այսօր կը պահէ իր դոյութիւնը: Ունեցած է շատ փայլուն ինչպէս նաև թոյլ շրջաններ, ոսկայն իր ընթացքը չէ կասեցուցած, այլ ընդհակառակը աշխատած է նորափթիթ սերունդին սըրտին մէջ վառ պահել ցեղին ոգին և ներմուծել հոն իր

նշանաբանին ամբողջ հարազատութիւնը, "միշտ պատրաստ" Հայրենիքին համար:

Ունի մօտ 70 սկառուներ որոնց մեծ մասը կանոնաւորաբար կը մասնակցին սկառուական ըզըր հաւաքոյթներուն: Իրենց բաժինը բերած են Պուլկարահայ սկառուական բանակումներուն, բացի 1935 Սոփիոյ մէջ կազմակերպուած բանակումէն: Սկառուական խումբը իր ոյժերով կազմակերպած է երկու մասնաճիւղային բանակումներ և մէկ ընդհանրական բանակում 1932ին Սլիվէնի մօտ, Սօթեր վայրին մէջ: Սկառուական խումբը իր օժանդակութիւնը բերած է ազգային ըզըր սօնակատարութեանց և կազմակերպուած այլ և այլ հանդէսներու: Այս տարուայ մարտ ամիսէն սկսեալ, երէցներու նախաձեռնութեամբ, ըյս կը տեսնէ "Հայ Արի" խմորատիպ երկ շաբաթաթերթ մը:

Շրջանին սկառուական խումբապետն է Ելբ. Մարկոս Մարկոսեան, աւագ խմբապետուհի՝ Տիկ. Վերժին փալազեան:



polyfoto
PALESTINE

ՓՈԼԻՖՕԹՕ
(Բ Ա Ջ Մ Ա Ն Կ Ա Ր)

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ
ԱՄԵՆԱՎԵՐՉԻՆ ՆՈՐՈՅԹԸ.
ԿԵՆԴԱՆԻ ԵՒ ԻՐԱԿԱՆ

48

Ն Կ Ա Ր Ե Ե Ր ' Չ Ա Ն Ա Չ Ա Ն Չ Ե Ի Ե Ր Ո Վ

125 Մ Ի Լ

Ա Ռ Ն Ո Ւ Ա Ծ 5 Վ Ա Յ Ր Կ Ե Ա Ն Ի Մ Է Ջ

Ն Ա Ե Ի

ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
ԱՅԼ ԳՈՐԾԵՐ

ՓՐԻՆՍԵՍ ՄԵՐԻ ՊՐԻՆՍԵՍ ԵՐՈՒՍԱԼԵՄ PRINCESS MARY AVE. JERUSALEM

Նոր հագուստ շինելէ առաջ
այցելեցե՛ք՝
ՊՈՒՇԿԱՐԱ ՍԱՀՈՒԱՐԻ
Դերձակ՝ Արանց և Կանանց
"Միոն-Հ.Մ.Ը.Մ." Ակումբի վերև:

ՍՍՍՍՍՍ
ՆԱՒԱՍԱՐԳ, Ժողովածու Գրակա-
նութեան և գիտութեան, է գիրք
1938, Թեհրան:
ՌԱԶՄԻԿ, Քաղաքական-Հասարակա-
կան Եօրթայ, Բ Տարի թիւ 37-48,
Սոփիա:

2013

Res. Regal. T. Maria
H. Keshishian

Գ Ի Ն՝

Պաղեստին	30 միլ
Սիրիա - Լիբանան	20 Ս.Գ.
Եգիպտոս	3½ Ե.Գ.
Մնացեալ բոլոր երկիրներ	4 Զրանք.

Ստանալու համար դիմել

“ Homenetmen ” Jerusalem Branch
c/o Levon H. Keshishian
P. O. B. 246
Jerusalem, Palestine

Կառ. Հ. Մ. Ի. Մ. Ի բոլոր մասնաճիւղերէն: